

**Ջրային ոլորտի զարգացման ծրագիր
(Հայաստանի Հանրապետություն)**

Ֆինանսավորման պայմանագիր

Հայաստանի Հանրապետության և
Եվրոպական ներդրումային բանկի միջև

Սույն պայմանագիրը կնքվում է
մի կողմից

Հայաստանի Հանրապետության՝ ի
դեմս.....

(այսուհետ՝ Վարկառու)

և մյուս կողմից՝

**Եվրոպական Ներդրումային Բանկի,
ի դեմս.....**

**Բանկը տեղակայված է Կոնրադ
Ադենաուր 98-100 բուլվարում,
Լյուքսեմբուրգ (blvd Konrad
Adenauer), Luxembourg, L-2950,
Luxembourg**

(այսուհետ՝ Բանկ)

Հաշվի առնելով, որ

- (1) Համաձայն ԵՄ 633/2009 որոշման՝ Բանկին ԵՄ երաշխիք տրամադրելու վերաբերյալ ԵՄ տարածքից դուրս իրականացվող ծրագրերի համար հատկացված վարկերի և վարկային երաշխիքների մասով առաջացած կորուստների դիմաց, ինչպես նաև վերոնշյալ որոշման կատարումն ապահովող համաձայնագրի՝ կնքված Եվրոպական Հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) և Բանկի միջև, չվճարելու դեպքում Հանձնաժողովը սահմանված երաշխիքի շրջանակներում հատուցում է Բանկի կողմից չստացված և Բանկին հասանելիք վճարումները, որոնք պետք է կատարվեին Բանկի և, ի թիվս այլոց, Վարկառուի միջև ընթացող ֆինանսական գործողությունների շրջանակներում (“**ԵՄ երաշխիք**”):
- (2) Վարկառուն հաստատել է, որ “Հայաստանի Ջրմուղ-կոյուղի” ընկերությունը (այսուհետև՝ **Շահագործող**) նախաձեռնում է Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման, ջրահեռացման և կոյուղաջրերի մաքրման համակարգերի վերակառուցման ծրագիր՝ նպատակաուղղված խմելու ջրի որակի բարելավմանը, ինչպես մանրամասն ներկայացվում է սույն փաստաթղթի (այսուհետև՝ “Ծրագրի”) “Ա” հավելվածում բերված տեխնիկական նկարագրության մեջ (այսուհետև՝ “Տեխնիկական նկարագրություն”):
- (3) Բանկի հաշվարկների համաձայն, ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 21,900,000 Եվրո (քսանմեկ միլիոն ինը հարյուր հազար եվրո), իսկ Վարկառուն նախատեսում է Ծրագիրը ֆինանսավորել հետևյալ կարգով.

Աղբյուր		Գումար (մլն. եվրո)
Բանկի	կողմից	6.5
տրամադրած վարկ		
ՎՋԵԲ-ի	կողմից	6.5
տրամադրած վարկ		
Հարևանության		7
Ներդրումային Գործիք (NIF)		
կողմից	ստացվող	
դրամաշնորհ		
Տարբեր դոնորների կողմից		1.9
տրամադրած աջակցություն		
ԸՆԴԱՄԵՆԸ		21.90

- (4) Մանրամասն նկարագիր (3)-ում սահմանված ֆինանսական ծրագիրն իրականացնելու նպատակով Վարկառուն դիմել է Բանկին 6.500.000 եվրո (վեց միլիոն հինգ հարյուր եվրո) վարկ ստանալու համար:

- (5) Բանկը, հաշվի առնելով այն փաստը, որ Ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է իր գործառնությունների շրջանակներում, ինչպես նաև սույն Նկարագրերում մեջբերված փաստերն ու հաստատումները, որոշում է կայացրել բավարարել Վարկառուի հայցը (պահանջը) և սույն Ֆինանսական պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում վերոնշյալին տրամադրել վարկ՝ 6.500.000 եվրո (վեց միլիոն հինգ հարյուր եվրո) չափով՝ պայմանով, որ վարկի չափը ոչ մի դեպքում չի գերազանցի Մանրամասն նկարագիր (3)-ում ներկայացված Ծրագրի ընդհանուր արժեքի 50 (հիսուն) տոկոսը:
- (6) Վարկառուն հաստատել է 6.500.000 եվրոյի (վեց միլիոն հինգ հարյուր եվրո) չափով վարկի ստացումը՝ սույն Համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխան:
- (7) 2008թ. Փետրվարի 12/29-ին Բանկի և Վարկառուի միջև ստորագրվել է շրջանակային համաձայնագիր ՀՀ-ում Բանկի գործունեության կանոնակարգման վերաբերյալ (“Շրջանակային Համաձայնագիր”), որը կշարունակի լիարժեք գործել սույն համաձայնագրի գործողության ողջ ընթացքում: Վարկառուն հաստատել է, որ Ծրագիրն ընդգրկված է Շրջանակային Համաձայնագրի շրջանակներում:
- (8) [] լիազորված է ստորագրել սույն Պայմանագիրը Վարկառուի անունից և նրա կողմից:
- (9) 2011թ. հուլիսի 14-ին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (“ՎՋԵԲ”) և Վարկառուի միջև կնքվել է համաձայնագիր (“**ՎՋԵԲ վարկային համաձայնագիր**”), համաձայն որի՝ ՎՋԵԲ-ը Ծրագրի ֆինանսավորման համար կտրամադրի մինչև 6.500.000 եվրո (վեց միլիոն հինգ հարյուր եվրո) ընդհանուր գումարի չափով վարկ (**ՎՋԵԲ-Վարկ**): Ավելին՝-ին ՎՋԵԲ-ի և Շահագործողի միջև կնքվել է համաձայնագիր Ծրագրի իրականացման նպատակով (Ծրագրի աջակցման համաձայնագիր, ինչպես նաև ՎՋԵԲ-ի Վարկային համաձայնագիրը միասին կազմում են “ՎՋԵԲ վարկային փաթեթը”):
- (10) Հանձնաժողովի և Վարկառուի միջև կնքվել է ֆինանսավորման համաձայնագիր, որի համաձայն Հանձնաժողովը կտրամադրի անհատույց դրամաշնորհ 7.000.000 եվրոյի չափով (յոթ միլիոն եվրո)՝ Ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով (“ԵՄ ֆինանսավորման համաձայնագիր”) և որով նախատեսում է Հանձնաժողովի (ՀՆԳ), Բանկի և ՎՋԵԲ ֆինանսական միջոցների օգտագործումը հավասարության հիմունքներով:

(11) Բանկի, ՎՋԵԲ-ի, Հանձնաժողովի և (ա) միջազգային ֆինանսական այլ կառույցների միջև կնքվել է շրջանակային համաձայնագիր “Հարևանության ներդրումային գործիքի (ՀՆԳ) շրջանակներում համագործակցության վերաբերյալ” (ուժի մեջ է 2009թ. դեկտեմբերի 21-ից) (“ՀՆԳ Շրջանակային համաձայնագիր”) և (բ) կնքվել կամ կնքնվի իրականացման մասին համաձայնագիր, որով կսահմանվեն ՀՆԳ շրջանակներում համագործակցության պայմանները՝ Վարկառուի հետ կնքված իրենց համապատասխան ֆինանսավորման համաձայնագրերի կատարման նպատակով (“Իրականացման համաձայնագիրը” և ՀՆԳ շրջանակային համաձայնագիրը միասին կազմում են “ՀՆԳ փաստաթղթեր”): Բանկը, ՎՋԵԲ-ը և Հանձնաժողովը համաձայնվեցին առ այն, որ ՎՋԵԲ-ը, ՀՆԳ փաստաթղթերի համաձայն, կգործի որպես գլխավոր ֆինանսական կառույց Ծրագրի շրջանակներում իրականացվելիք համագործակցության առնչությամբ:

(12) Շահագործողը և Հայաստանի Հանրապետությունը Ծրագրի իրականացման նպատակով Բանկի հետ կկնքեն ծրագրի վերաբերյալ համաձայնագիր (այսուհետ՝ Ծրագրային Համաձայնագիր):

(13) Բանկի Կանոնադրությամբ սահմանված է, որ Բանկն ապահովում է հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ օգտագործումը, ելնելով Եվրոպական Միության շահերից: Հետևաբար, Բանկի վարկային գործառույթների դրույթներն ու պայմանները պետք է համահունչ լինեն ԵՄ քաղաքականությանը:

(14) ԵՆԲ-ն համարում է, որ տեղեկատվության հասանելիությունը կարևոր դեր է խաղում բնապահպանական և սեցիալական ռիսկերի նվազեցման հարցում՝ ներառյալ մարդու իրավունքների խախտումները՝ կապված իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի հետ: Ըստ այդմ, ԵՆԲ-ն սահմանել է թափանցիկության իր սկզբունքները, որոնց նպատակն է բարձրացնել ԵՆԲ Խմբի հաշվետվողականության մակարդակը շահառուների և, ընդհանրապես, ԵՄ քաղաքացիների նկատմամբ՝ ապահովելով այն տեղեկատվության հասանելիությունը, որը վերջիններին թույլ կտա հասկանալ Բանկի կառավարման համակարգը, ռազմավարությունը, քաղաքականությունը, գործունեությունը և գործելակերպը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ համաձայնվեցին հետևյալի շուրջ.

Մեկնաբանություններ և սահմանումներ

(ա) Մեկնաբանություններ

(i) Սույն Համաձայնագրում հողվածներին, Մանրամասն նկարագրերին, ժամանակացույցերին և հավելվածներին կատարվող հղումները, բացառությամբ հատուկ սահմանված դեպքերի, համարվում են հղումներ սույն Համաձայնագրի համապատասխան հողվածներին, Մանրամասն նկարագրերին, ժամանակացույցերին և հավելվածներին:

(ii) Սույն Համաձայնագրում որևէ իրավադրույթին կատարվող հղումը համարվում է տվյալ իրավադրույթին՝ փոփոխված կամ վերահաստատված, կատարվող հղում:

(iii) Սույն Համաձայնագրում որևէ այլ համաձայնագրի կամ իրավական փաստաթղթի կատարվող հղումը համարվում է այդ իսկ համաձայնագրին կամ իրավական փաստաթղթում՝ փոփոխված, լրամշակված, գործողության ժամկետը երկարաձգված կամ վերահաստատված հղում:

(բ) Սահմանումներ

Սույն Համաձայնագրում.

Ծանուցման **“Ընդունման վերջնաժամկետ”** նշանակում է.

(ա) ծանուցման օրվա դրությամբ Լյուքսեմբուրգյան ժամանակով ժամը 16:00-ը, եթե ծանուցումը աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվել է մինչև 14:00 կամ

(բ) հաջորդ օրվա դրությամբ ժամը 11:00, եթե ծանուցումը ցանկացած աշխատանքային կամ ոչ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվել է ժամը 14:00-ից հետո:

“Ընդունված տրանշ”-ը վճարման առաջարկի այն մասնաբաժինն է, որը պատշաճորեն ստացվել է Վարկառուի կողմից՝ իր դրույթների համաձայն գումարների հատկացման օրվա դրությամբ կամ դրանից առաջ:

“Աշխատանքային օրը” նշանակում է այն օրը (բացի շաբաթ և կիրակի օրերից), որի ընթացքում Լյուքսեմբուրգի տարածքում գործող Բանկը և առևտրային բանկերը բաց են իրենց գործառնական գործունեության համար:

“Հսկողության փոխանցման դեպք” հասկացությունն ներկայացված է [4.03A(3)] հոդվածում:

“Օրենքի փոփոխություն”-ը ներկայացված է Հոդված 4.03A (4)-ում:

“Պայմանագիր”-ը ներկայացված է Նկարագիր 5-ում:

“Կորպորատիվ զարգացման ծրագիրը” նշանակում է Վաղ անցումային շրջանում գտնվող երկրների (ETC) հիմնադրամի կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության ծրագիր, որն Շահագործողին պետք է օգնի լրամշակել և կատարելագործել ջրային ոլորտի կառավարման համար պատասխանատու կազմակերպության երկարաժամկետ զարգացման ծրագիրը, բիզնես-պլանը, ենթակառուցվածքների զարգացման նախագծերը, սակագնային համակարգի բարեփոխման ծրագիրը, կադրային քաղաքականությունը, ֆինանսական կառավարման համակարգը, կապիտալ պլանավորումը, ջրի կորուստների կրճատումը, կազմակերպական արդյունավետությունը, ջրային ոլորտի վերաբերյալ հանրային իրազեկման աստիճանի բարձրացումը և հարաբերությունները հասարակայնության հետ: Բացի այդ, խորհրդատուները կներկայացնեն իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ՝ ի նախապատրաստումն Շահագործողի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք վարձակալության երկարաժամկետ համաձայնագրի:

“Վարկ” հասկացությունը կրում է 1.01 հոդվածում տրված իմաստը:

“**Պարտքի գործիքը**” նշանակում է (ա) փաստաթուղթ, այդ թվում՝ ցանկացած անդորրագիր կամ քաղվածք, որը հաստատում կամ սահմանում է վարկը, երաշխիքը, կանխավճարը կամ վարկի երկարաձգումը (ներառյալ՝ վարկի ցանկացած երկարաձգումը վերաֆինանսավորման կամ ժամկետների փոփոխման համաձայնագրով), (բ) պարտատոմսով կամ պարտքի առկայությունը հաստատող որևէ այլ փաստաթղթով հաստատվող պարտավորվածություն կամ (գ) այլոց պարտքի գործիքից բխող պարտավորվածության երաշխիք՝ պայմանով, որ բոլոր երեք դեպքերում այդ պարտավորվածությունը կանոնակարգվում է Վարկառուի իրավական համակարգից տարբերվող իրավական համակարգով:

“**Վճարումներ ուշացման/հետաձգման դիմաց**” նշանակում է ուշացված կամ դադարեցված հատկացման գումարի դիմաց այնպիսի տոկոսադրույքով (եթե այն բարձր է զրոյից) հաշվարկվող հատուցում, որով.

- այդ գումարի նկատմամբ կիրառվելիք տոկոսադրույքը, այն դեպքում, եթե այդ գումարը Վարկառուին հատկացվել էր ժամանակացույցով սահմանված օրվա ընթացքում գերազանցում է

- EURIBOR (մեկ ամսվա դրույքաչափով) 0.125%-ից պակաս (12.5 բազիսային կետ):

Նման հատուցումը պետք է ուժի մեջ մնա ժամանակացույցով սահմանված հատկացման օրվանից մինչև փաստացի հատկացման օրը կամ, ինչպես հնարավոր է որոշ դեպքերում, մինչև ընդունված տրանշի չեղյալ հայտարարելու օրը՝ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

“**Հատկացման ընդունում**”՝ Վարկառուի կողմից պատշաճ կերպով ստորագրված հատկացման առաջարկի օրինակը:

“**Հատկացման ընդունման վերջնաժամկետ**”՝ հատկացման առաջարկում նշված՝ դրա ժամկետը լրանալու ամսաթիվն ու ժամը:

“**Հատկացման առաջարկ**”՝ Աղյուսակում C.1-ում տրված ձևի համաձայն կազմված նամակը:

“**Ճեղքվածքի իրավիճակներ**” նշանակում է ստորև նշված դեպքերը կամ դրանցից մեկը.

(ա) լուրջ ճեղքվածք վճարման կամ հաղորդակցման այն համակարգերում կամ ֆինանսական այն շուկաներում, որոնց միջոցով կատարվում են սույն Պայմանագրով նախատեսված վճարումները կամ,

(բ) ցանկացած այլ դեպք, որի արդյունքում խափանվում է (տեխնիկական կամ համակարգային այլ պատճառներով) Բանկի կամ Վարկառուի ֆինանսական կամ վճարային գործողությունները, ինչի հետևանքով կողմերը զրկվում են

(i) սույն Պայմանագրով նախատեսված վճարային պարտավորությունները կատարելու հնարավորությունից կամ

(ii) այլ կողմերի հետ հաղորդակցվելու հնարավորությունից,

Եթե խափանումը (վերոնշյալ (ա) կամ (բ) կետերում նշված դեպքերում) չի առաջացել այն կողմի պատճառով, որի գործողությունները խափանվել են, կամ գտնվում է այդ կողմի վերահսկողությունից դուրս:

“**ԵՆԲ վարկային հաշիվը**” կհամարվի Վարկառուի ցանկացած այլ ակտիվներից առանձնացված այն հաշիվը, որի վրա կփոխանցվեն Բանկի կողմից տրամադրվող գումարները, որից հաշվի վճարումներ կարվեն Ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն սույն Պայմանագրի և Ծրագրային Համաձայնագրի, Վերջնական Վարկատուից վերջնական Վարկառուին փոխանցված Վարկային համաձայնագրի, և այլ համապատասխան համաձայնագրերի, եթե այդպիսիք կան:

“**Շրջակա միջավայրը**” են համարվում այն գործոնները, որոնք որևէ կերպով ազդում են մարդկության բարեկեցության վրա:

Դրանք են՝

(ա) բուսական և կենդանական աշխարհը,

(բ) հող, ջուր, օդ, կլիմա և լանդշաֆտը, և

(գ) մշակութային հուշարձաններ և կառուցված միջավայր,

ներառյալ՝ առանց սահմանափակումների, աշխատանքի անվտանգության, բնակչության առողջության և աշխատանքային պայմանների հետ կապված հարցերը:

“**Բնապահպանական թույլտվություն**”՝ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված ցանկացած թույլտվություն, լիցենզիա, եզրակացություն կամ թույլատրող այլ փաստաթուղթ:

“**Բնապահպանական հայցը**”՝ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ որևէ անձի կողմից ներկայացված ցանկացած հայց, հայցային պահանջ, պաշտոնական ծանուցում կամ անցկացվող հետաքննություն:

“**Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրությունը**” նշանակում է

(ա) ԵՄ այն օրենքները, ստանդարտները և սկզբունքները, որոնք սահմանվում են Բանկի կողմից մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը,

(բ) ՀՀ համապատասխան օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը և

(գ) Համապատասխան միջազգային իրավական ակտերը,

Որոնց հիմանական նպատակն է շրջակա միջավայրի պահպանությունը, պաշտպանությունը կամ բարելավումը:

“**EURIBOR**” վերաբերյալ տեղեկատվությունը նշված է Աղյուսակ Բ-ում:

“**EUR**” կամ “**Եվրոն**” նշանակում է Եվրոպական Միության անդամ-պետությունների պաշտոնական դրամական միավորը, որն այդ երկրներում ժամանակ առ ժամանակ ընդունվում են որպես իրենց տարադրամ՝ Եվրոպական Միության և Եվրոպական Միության գործունեության մասին համաձայնագրերի, ինչպես նաև դրանց հաջորդող համաձայնագրերի դրույթներին համապատասխան:

“Միջոցների ստացման վերջնաժամկետ” սահմանվում է 36 ամիս՝ սույն Պայմանագրի ստորագրելուն պես:

«**Հաստատագրված դրույքաչափ**» համարվում է Բանկի կողմից սահմանված տարեկան տոկոսադրույքը, որը ժամանակ առ ժամանակ հաստատվում է իր կառավարման մարմինների կողմից այն վարկերի համար, որոնք ունեն ֆիքսված դրույքաչափ՝ արտահայտված տրանշի փոխարժեքով և որի նկատմամբ կկիրառվեն միևնույն պայմանները, ինչ կապիտալի ետվճարման կամ տոկոսադրույքի վճարման համար:

“**Ֆիքսված տոկոսադրույքով տրանշ**” նշանակում է ֆիքսված տոկոսադրույքով հատկացվող տրանշը:

“**Լողացող տոկոսադրույք**” լողացող տոկոսադրույքի հաստատուն տարբերությունն է, այսինքն՝ Բանկի կողմից սահմանված Լողացող դրույքաչափի ժամանակահատված համարժեք տարեկան տոկոսադրույք գումարած տարբերություն:

“**Լողացող դրույքաչափի ժամանակահատված**” համարվում է որևէ վճարման օրվանից մինչև հաջորդ վճարման օրը ընկած ժամանակահատվածը, իսկ լողացող տոկոսադրույքի առաջին ժամանակահատվածը կհաշվարկվի տրանշի վճարման օրվանից:

“**Լողացող տոկոսադրույքով տրանշը**” այնպիսի տրանշ է, որի նկատմամբ կիրառվում է լողացող տոկոսադրույք:

“**IFRS**”-ները հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներն են՝ IAS-ի 1606/2002 կանոնակարգի նշանակության շրջանակներում, որքանով դրանք կիրառելի են համապատասխան ֆինանսական հաշվետվությունների համար:

“**Հատուցելի կանխավճարի դեպքը**” 4.03Ա հոդվածով նախատեսված կանխավճարի դեպքն է:

“**Վարկը**” նշանակում է սույն Պայմանագրին համապատասխան Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ հատկացվող տրանշերի հանրագումարը:

“**Շուկայի ճեղքվածքի իրավիճակներ**” նշանակում է հետևյալ ներքոնշյալ հանգամանքները.

- (ա) եթե, Բանկի հիմնավորված համոզմամբ, առաջանում են դեպքեր կամ բացառիկ հանգամանքներ, որոնք բացասաբար են ազդում Բանկի կողմից ֆինանսավորման իր աղբյուրներին հասանելիության վրա;
- (բ) եթե, Բանկի կարծիքով, բացակայում են մշտական աղբյուրներից հասանելի միջոցները համապատասխան տարադրամով տրանշը ֆինանսավորելու և/ կամ վարկը մարելու և/կամ այդպիսի տրանշի հատուցման պայմանները կատարելու համար;
- (գ) այնպիսի տրանշի դեպքում, որի շահույթաբաժինը վճարվում կամ կվճարվեր լողացող տոկոսադրույքով.

(Ա) Բանկի պայմաններին համապատասխան ֆինանսավորման իր աղբյուրներից միջոցներ ձեռք բերելու արժեքը Բանկի համար տրանշի լողացող տոկոսադրույքի հենակետային ժամանակահատվածին համավասար ժամանակահատվածում (այսինքն՝ տարադրամի շուկայում) կգերազանցի EURIBOR-ը

կամ

(Բ) Բանկը եզրահանգում է, որ EURIBOR-ը սահմանելու համար անհրաժեշտ բավարար միջոցները բացակայում են կամ հնարավոր չէ սահմանել EURIBOR-ը “Բ” աղյուսակում տրված սահմանմանը համապատասխան:

“Էական անբարենպաստ փոփոխությունը” ցանկացած Վարկառուի կամ Շահագործողի համար իրավիճակի ցանկացած փոփոխություն, որն ազդում է համապատասխանաբար կամ Վարկառուի, կամ Շահագործողի վրա, ինչը Բանկի կարծիքով.

(1) էականորեն նվազեցնում են Վարկառուի կամ Շահագործողի հնարավորությունները սույն Պայմանագրի կամ Ծրագրային Համաձայնագրի շրջանակներում նրանց ֆինանսական կամ ցանկացած այլ պարտավորությունների կատարման ժամանակ,

(2) էական բացասական ազդեցություն է գործում Վարկառուի կամ Շահագործողի ֆինանսական իրավիճակի կամ հեռանկարների վրա կամ

(3) բացասաբար են ազդում Վարկառուի կամ Շահագործողի կողմից տրամադրվող ցանկացած արժեթղթերի վրա:

“Մարման ժամկետ” համարվում է տրանշի մարման վերջին օրը՝ համաձայն Հոդված 4.01-ի:

“Վերջնական Վարկատուից վերջնական Վարկառուին փոխանցված Վարկային համաձայնագիր” հասկացությունը կրում է [1.04A(k)]. հոդվածում տրված իմաստը:

“Վճարման ամսաթիվը” յուրաքանչյուր տարվա ապրիլի և հոկտեմբերի 16-ն է կամ վարկի մարման ամսաթիվն է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի օրը ոչ աշխատանքային օր է, դա նշանակում է.

(a) ֆիքսված տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը՝ բացառությամբ Հոդվածի 3.01 համաձայն վճարվելիք տոկոսադրույքի փոփոխության, երբ փոխարենը այդ առանձին հատկացման և վերջին շահութաբաժնի վճարման համար կիրառվում է նախորդ աշխատանքային օրը, և միայն այդ դեպքում՝ Հոդվածի 3.01 համաձայն տոկոսադրույքի փոփոխությամբ, և

(b) լողացող տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ տվյալ օրացուցային ամսվա հաջորդ օրը, որը աշխատանքային օր է, կամ հակառակ դեպքում, ամենամոտ նախորդող օրը, որը նույնպես աշխատանքային օր է, բոլոր դեպքերում՝ Հոդված 3.01-ի համաձայն տոկոսադրույքի համապատասխան փոփոխությամբ:

“Կանխավճարի գումար” Հոդվածի 4.02Ա-ի համաձայն՝ Վարկառուի կողմից վճարվելիք տրանշի գումարն է:

“Կանխավճարի ժամկետ” կհամարվի վճարման այն օրը, երբ Վարկառուն նախապես կվճարի կանխավճարային գումարը:

“Կանխավճարի հատուցումը” նախնական վճարման ենթակա կամ չեղյալ հայտարարված հիմնական գումարի առնչությամբ ԵՆԲ կողմից Վարկառուին տրամադրված գումարն է, որը ներկայացվում է ստորև տրված ավելցուկի ընթացիկ արժեքով (կանխավճարի վճարման օրվա դրությամբ)։

(ա) այն տոկոսադրույքը, որը կգումարվեր կանխավճարի գումարին դրա վճարման օրվանից մինչև մարման օրն ընկած ժամանակահատվածում, եթե կանխավճարը վճարված չլիներ և

(բ) այն տոկոսադրույքը, որը կգումարվեր վերոնշյալ ժամանակահատվածում, եթե այն հաշվարկված լիներ վերախմբավորման դրույքով՝ 0.15% պակաս (տասնհինք բազիսային կետ)։

Վերոնշյալ ընթացիկ արժեքը հաշվարկվում է վերախմբավորման դրույքաչափին հավասար հաշվարկային տոկոսադրույքով՝ կիրառելի յուրաքանչյուր վճարման օրվա դրությամբ։

“Կանխավճարի ծանուցում” Վարկառուի կողմից տրվող ծանուցումն է, որում, այլ տվյալներից բացի, նշված են կանխավճարային գումարի չափը և ժամկետը՝ համաձայն Հոդված 4.02A-ի։

“Ծրագիր” հասկացությունը կրում է Մանրամասն նկարագիր 2-ում արտահայտված իմաստը։

“Վերախմբավորման դրույքաչափ” ֆիքսված տոկոսադրույքով անպիսի վարկերի համար հատուցման հաշվարկման օրվա դրությամբ գործող ֆիքսված տոկոսադրույքն է, որոնք արտահայտվում են միևնույն տարադրամով, և որոնց նկատմամբ կիրառվում են շահութաբաժնի վճարման մարման օրը վճարման միևնույն պայմաններն, ինչ տրանշի դեպքում, որի նկատմամբ առաջարկվում է կամ խնդրարկվում է կատարել կանխավճար։ Այն դեպքերում, երբ ժամանակահատվածը չի գերազանցում 48 ամիսը (կամ 36 ամիսը՝ այդ ընթացքում հիմնական վարկի մարումը չկատարելու դեպքում), կկիրառվի արժույթային շուկայում գործող ամենամոտ համապատասխան դրույքաչափը, որը հավասար է EURIBOR-ից հանած 0.125% (12.5 բազիսային կետ)՝ մինչև 12 (տասներկու) ամիս տևողությամբ ժամանակահատվածների համար։ 12 և 36/48 ամիսների միջև ընկած ժամանակահատվածների դեպքում կիրառվում է սվոպային տոկոսադրույքների բազիսային կետը, որը հրապարակվում է “Ռոյտերս” գործակալության “InterCapital” պարբերականում համապատասխան տարադրամի համար և կիրառվում է Բանկի կողմից հաշվարկման պահին։

“Համապատասխան աշխատանքային օր” այն օրն է, երբ Իրական ժամանակի ռեժիմում խոշոր վճարումների արագ կատարման անդրեվրոպական համակարգը, որում կիրառում է մեկ միասնական հարթակ, և որը սկսել է շահագործվել 2007թ. նոյեմբերի 19-ին (TARGET 2), բաց է եվրոյով վճարումներ իրականացնելու համար։

“Հատկացման սահմանված ժամկետը” այն օրն է, երբ Հոդվածի 1.02Գ-ի համաձայն նախատեսվում է հատկացնել տրանշը։

“Երաշխիք” կամ “Երաշխիքային իրավունք” ցանկացած գրավ է, սեփականության պահման իրավունք, հիպոտեկ, իրավունքի վերափոխանցում կամ որևէ անձի պարտավորությունները երաշխավորող այլ գրավային փաստաթուղթ կամ համանման իրավական ուժ ունեցող ցանկացած այլ համաձայնագիր կամ պայմանագիր:

“Տարբերություն” (սպրեդ) նշանակում է ֆիքսված սպրեդ EURIBOR-ով (դրական կամ բացասական), որը սահմանվում է Բանկի կողմից և ծանուցվում Վարկառուին համապատասխան հատկացման առաջարկ մասին կամ ենթակա է քննարկման:

“Տեխնիկական նկարագրություն” հասկացությունը կրում է Մանրամասն նկարագիր 2-ում ներկայացված իմաստը:

“Տրանշ” սույն Համաձայնագրին համապատասխան կատարվող կամ կատարվելիք յուրաքանչյուր հատկացումն է

ՀՈԴՎԱԾ 1

Վարկը և հատկացումները

1.01 Վարկի գումարը

Սույն պայմանագրով Բանկը Վարկառուի օգտին որոշում է կայացրել Ծրագիրը ֆինանսավորելու նպատակով տրամադրել 6,500,000 եվրո (6 միլիոն 5 հարյուր հազար եվրո) գումարի չափով վարկ և վերջինս ընդունել է այդ որոշումը:

(“Վարկ”).

1.02 Հատկացման ընթացակարգը

1.02Ա Տրանշերը

Բանկի կողմից Վարկը կհատկացվի առավելագույնը վեց տրանշերով: Յուրաքանչյուր տրանշի գումարը, նվազագույնը կկազմի 1,000,000 եվրո (մեկ միլիոն եվրո), եթե այն չի համարվում Վարկի չօգտագործված մաս:

1.02Բ Հատկացման առաջարկը

Վարկառուի հայտն ստանալուն պես, Բանկը տրանշի հատկացման նպատակով ուղարկում է հատկացման առաջարկ՝ պայմանով, որ Հոդված 1.06Բ-ում նշված ոչ մի իրավիճակի չի առաջացել կամ չի շարունակվում: Վարկառուն հատկացման առաջարկը պետք է ստանա ոչ ուշ, քան ընդունման վերջնաժամկետին նախորդող 10-րդ օրը: Հատկացման առաջարկում նշվում են.

(ա) տրանշի գումարը;

(բ) Վճարման սահմանված ամսաթիվը, որը համարվում է Աշխատանքային Օր և կրճնկնի Հատկացման առաջարկից առնվազն 15 օր հետո կամ միջոցների ստացման վերջնաժամկետ համարվող օրը կամ դրանից առաջ

- (գ) Տրանշի տոկոսադրույքը (ա) ֆիքսված տոկոսադրույք, կամ (բ) լողացող տոկոսադրույք՝ 3.01 հոդվածի կիրառելի դրույթներին համապատասխան;
- (դ) Տրանշի համար տոկոսադրույքի վճարման պարբերականությունը՝ Հոդված 3.01-ի դրույթներին համապատասխան;
- (ե) Տրանշի առաջին վճարման օրը;
- (զ) Տրանշի հիմնական գումարի մարման պայմանները՝ Հոդվածի 4.01-ի դրույթներին համապատասխան;
- (է) Տրանշի հիմնական գումարի մարման առաջին և վերջին ամսաթվերը;
- (ը) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ ֆիքսված տոկոսադրույքը, իսկ լողացող տոկոսադրույքով տրանշի դեպքում՝ սպրեդը, որը կիրառելի կլինի մինչև մարման օրը;
- (թ) Հատկացման ընդունման վերջնաժամկետը:

1.02Գ Հատկացման ընդունումը

Վարկառուն կարող է ընդունել հատկացման առաջարկը՝ Բանկին ուղարկելով հատկացման ընդունման ծանուցումը հատկացման ընդունման վերջնաժամկետից ոչ ուշ: Հատկացման ընդունման ծանուցմանը կից ներկայացվում են.

- (ա) IBAN ծածկագիրը (կամ տեղական բանկային պրակտիկայում ընդունված որևէ այլ ձևաչափով) և ԵՆԲ վարկային հաշվի SWIFT BIC-ը, որին հոդվածին 1.02 Դ համապատասխան կատարվում է տրանշի հատկացումը; և
- (բ) հաստատում, որ հատկացման ընդունման ծանուցումը ստորագրելու լիազորությամբ օժտված անձը կամ անձինք, այդ անձի կամ անձանց ստորագրությունների նմուշները կամ Վարկառուի տեղականքն առ այն, որ սույն համաձայնագրի դրույթների համաձայն հատկացման ընդունման ծանուցումները ստորագրելու լիազորությամբ օժտված անձի կամ անձանց այդ լիազորություններն ուժի մեջ են:

Սահմանված կարգով՝ հատկացման ընդունման վերջնաժամկետի օրը կամ դրանից շուտ հատկացման առաջարկը Վարկառուի կողմից ընդունվելու դեպքում, Բանկը, համապատասխան հատկացման առաջարկի և սույն Համաձայնագրի պայմանների համաձայն, Վարկառուին տրամադրում է ընդունված տրանշը:

Վարկառուն կարող է մերժել ցանկացած հատկացման առաջարկ, եթե այն չի ընդունվել սահմանված կարգով՝ հատկացման ընդունման վերջնաժամկետի օրը կամ դրանից շուտ:

1.02Դ Հատկացման հաշիվը

Հատկացումը կատարվում է ԵՆԲ վարկային հաշվին, որի մասին Վարկատուն գրավոր տեղեկացնում է Բանկին ոչ ուշ, քան ժամանակացույցով սահմանված հատկացման օրվան նախորդող 15-րդ օրը (IBAN ծածկագրով կամ տեղական բանկային պրակտիկայում ընդունված որևէ այլ ձևաչափով): Վարկատուն գիտակցում է, որ այդ հաշվին կատարվող վճարումները կազմում են սույն Համաձայնագրով նախատեսված հատկացումները՝ ինչպես որ վճարումներ կատարված Վարկառուի սեփական բանկային հաշվին:

Որպես ԵՆԲ վարկային հաշիվ կարող է սահմանվել միայն մեկ հաշիվ:

1.03 Հատկացման արժույթ

Բանկի կողմից տրանշերի հատկացումները կատարվում են եվրոյով:

1.04 Հատկացումների պայմանները

1.04Ա Առաջին տրանշ

Հոդված 1.02-ին համապատասխան, առաջին տրանշի հատկացումը կատարվում է բացառապես Բանկի կողմից սահմանված կարգով՝ ժամանակացույցով նախատեսված հատկացման օրվանը նախորդող 7-րդ աշխատանքային օրը կամ դրանից շուտ Բանկին հետևյալ փաստաթղթերը կամ տեղեկությունները տրամադրելուն պես.

- (ա) ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված՝ հայերեն լեզվով կազմված պաշտոնական կարծիք Վարկառուի կողմից սույն Համաձայնագրի պահանջները հավուր պատշաճի կատարելու և դրա ուժի մեջ լինելու, կիրառելիության և պարտավորեցնող բնույթի վերաբերյալ: Նման կարծիքը պետք է հիմնավորված լինի կամ դրան կից պետք է ներկայացվեն Վարկատուի՝ սույն Համաձայնագիրը կնքելու լիազորությունը հաստատող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան սույն Համաձայնագրի վավերացումը հաստատող փաստաթղթերը;
- (բ) Շահագործողի իրավական հարցերով խորհրդատուի կողմից անգլերեն լեզվով կազմված գրավոր եզրակացություն, որով հաստատվում է, որ ծրագրի իրականացման համաձայնագիրը սահմանված կարգով հաստատվել, կատարվել և տրամադրվել է Շահագործողի անունից և ներառում է հիմնավորված և իրավական տեսակետից պարտավորեցնող դրույթներ Շահագործողի համար, որոնք կիրառելի են վերոնշյալ համաձայնագրի պահանջներին համապատասխան;
- (գ) անգլերեն լեզվով կազմված տեղեկանք՝..... կողմից սույն Համաձայնագիրը Վարկառուի անունից ստորագրելու համար համապատասխան լիազորությամբ օժտված լինելու մասին;
- (դ) անգլերեն լեզվով կազմված տեղեկանք կողմերի՝ Շահագործողի անունից ծրագրի իրականացման համաձայնագիրը ստորագրելու համար համապատասխան լիազորություններով օժտված լինելու մասին;

- (ե) ապացույցներ առ այն, որ ՎՋԵԲ վարկային փաթեթը, ԵՄ ֆինանսավորման համաձայնագիրը և իրականացման համաձայնագիրը կատարվել և ներկայացվել են, և որ այդ փաստաթղթերի վավերականությունն ապահովող բոլոր պայմաններն ապահովվել են կամ կատարվել է դրանցից բացառություն, և որ Վարկառուն կարող է դրանց համաձայն մշակել նախագծեր;
- (զ) ապացույցներ առ այն, որ Շահագործողն ստացել է ծրագրի իրականացման համաձայնագրի հետ կապված և պետական կամ հասարակական մարմինների կողմից տրամադրված բոլոր անհրաժեշտ թույլտվությունները, թույլատրագրերը, արտոնագրերն ու հաստատումները;
- (է) ապացույցներ առ այն, որ ապահովագրման հետ կապված պահանջները կատարվել են Հոդվածին 6.05-ին համապատասխան;
- (ը) ծառայության գործակալի կողմից իր նշանակման մասին ապացույցը;
- (թ) ապացույցներ առ այն, որ Շահագործողը, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի, ՎՋԵԲ-ի և Հանձնաժողովի (կամ, համապատասխանաբար այլ համաֆինանսավորողների) հետ, վարձել է, կվարձի կամ, կամ օգտվում է կամ կօգտվի այնպիսի խորհրդատուների ծառայություններից, որոնց որակավորումը, մասնագիտական փորձը և տեխնիկական առաջադրանքները համապատասխանում են Բանկի պահանջներին, ներառյալ՝ խորհրդատուներ, ովքեր աջակցություն են տրամադրում ծրագրի, ինչպես նաև Կորպորատիվ զարգացման Ծրագրի իրականացման նպատակով:
- (ժ) ապացույցներ առ այն, որ պատշաճ կարգով ստացվել են Բանկի կողմից սահմանված կամ սույն Հոդված «ա» կետով նախատեսված պաշտոնական կարծիքում նշված արժույթային հսկողությանն առնչվող բոլոր համաձայնությունները, որոնք Վարկառուին անհրաժեշտ են հատկացումներն ստանալու, վարկը մարելու, շահութաբաժինը վճարելու և սույն Համաձայնագրով նախատեսված այլ վճարումները կատարելու համար;
- (ի) ապացույցներ առ այն, որ Վարկառուի և Շահագործողի միջև կնքվել է վարկային համաձայնագիր, որով կարգավորվում է Բանկի կողմից սահմանված պայմաններով վարկային միջոցների ուղղորդումը դեպի Շահագործողը («Վարկային համաձայնագիր») և
- (լ) գնահատման համար գանձվող վարձավճարի կատարումը հաստատող փաստաթուղթ՝ Հոդվածին 1.08-ին համապատասխան:

1.04Բ Բոլոր տրանշերը

Համաձայն Հոդվածի 1.02-ի՝ յուրաքանչյուր, այդ թվում՝ առաջին տրանշի հատկացումը պայմանավորվում է հետևյալով.

- (ա) Բանկի կողմից՝ Բանկի իսկ սահմանած կարգով առաջարկվող տրանշի ժամանակացույցով նախատեսված հատկացման օրվանը նախորդող 7-րդ օրը կամ դրանից շուտ հետևյալ փաստաթղթերը կամ տեղեկությունները ստանալուն պես.
- (i) Վարկառուի կողմից տրամադրվող փաստաթուղթ՝ կազմված Աղյուսակ D-ի ձևով;

- (ii) ապացույցներ առ այն, որ հատկացման ընդունման ծանուցագիրը ստորագրելու լիազորություն ունեցող անձը կամ անձինք դեռևս օժտված են այդ լիազորությամբ, ինչպես նաև այդ անձի կամ անձանց ստորագրությունների հաստատված նմուշները;
 - (iii) ՎՋԵԲ-ի վարկային փաստաթղթերը, ԵՄ ֆինանսական համաձայնագիրը և ՀՆԾ փաստաթղթերը շարունակում են ուժի մեջ մնալ, վավերական են և իրագործելի, իսկ դրանցում նշված վճարման բոլոր պայմանները կատարվել են;
 - (iv) ապացույցներ առ այն, որ ԵԽ արաշխիքն ուժի մեջ է, կիրառելի է և կրում է պարտավորեցնող բնույթ, և որ չի առաջացել որևէ իրավիճակ, որը, Բանկի հիմնավորված կարծիքով, կարող է բացասաբար ազդել ԵԽ երաշխիքի իրավական, վավեր և կիրառելի կարգավիճակի կամ Բանկի կողմից այդ երաշխիքի համաձայն հայց ներկայացնելու՝ Բանկի իրավունքի վրա;
 - (v) Հաստատումն այն մասին, որ ԵՀ Երաշխավորագիրը վավերական է, ունի պարտադիր իրավաբանական ուժ և համաձայն Բանկի հիմնավորված կարծիքի չի գրանցվել որևէ հեղափոխություն կամ հանգամանք, որոնք բացասաբար կազդեն օրինական, վավերական և պարտադիր իրավաբանական ուժ ունեցող ԵՀ Երաշխավորագրի կամ Բանկի կողմից ստորև բերված պահանջների վրա;
 - (vi) Պայմանագրի կամ Ծրագրային Համաձայնագրի կնքման, վավերացման, և իրավաբանական ուժ ունենալու, ինչպես նաև սույնով նախատեսված գործարքների իրականացման համար, Բանկը Վարկառուին ծանուցում է ցանկացած այլ լիազորության, եզրակացության, երաշխիքի և փաստաթղթի պատճենների տրամադրման վերաբերյալ:
 - (vii) ապացույցներ առ այն, որ հերթական Տրանշն օգտագործելուց հետո Վարկի հանրագումարը չի գերազանցում Վարկառուի կամ Շահագործողի կողմից Ծրագրի շրջանակներում մինչև համապատասխան հատկացման առաջարկի օրը կատարված ծախսերի հանրագումարը (x) կամ համապատասխան հատկացման առաջարկի օրվանից 12 ամսվա համար Համաձայնագրով նախատեսված ծախսերի հանրագումարը (y); և
- (բ) Առաջարկված Տրանշի համար Հատկացման Սահմանված Ամսաթվի դրությամբ՝
- (i) Հոդված 6.18-ի համաձայն՝ կրկնվող հայտարարություններն ու երաշխիքները բոլոր առումներով ճշգրիտ են, և
 - (ii) որևէ իրավիճակ կամ հանգամանք, որն առաջացնում է կամ կարող է հետագայում կամ սույն Պայմանագրի համաձայն այդ մասին ծանուցելու դեպքում առաջացնել
 - (աա) Հոդված 10.01-ով նախատեսված չվճարելու (դեֆոլտի) դեպք, կամ
 - (բբ) Հոդված 4.03 -ով նախատեսված նախնական վճարման դեպք

չի առաջացել և չի շարունակում մնալ չշտկված կամ որպես բացառություն չսահմանված կամ առաջարկվող տրանշից բխող:

1.05 Հատկացման հետաձգում

1.05Ա Հետաձգման հիմքերը

Վարկառուի գրավոր հայտի հիման վրա, Բանկը կարող է հետաձգել ցանկացած ընդունված տրանշի հատկացումը՝ մասամբ կամ ամբողջությամբ, մինչև Վարկառուի նշած ամսաթիվը, որը պետք է լինի ոչ ուշ, քան հատկացման օրվանը հաջորդող 6 ամիսը լրանալու օրը և ոչ ուշ, քան հատկացման առաջարկում նշված՝ տրանշի մարման օրվանը նախորդող 60-րդ օրը: Նման դեպքում Վարկառուն պետք է վճարի հետաձգման հատուցում, որը հաշվարկվում է հետաձգված հատկացման գումարի հիման վրա:

Որևէ տրանշի հատկացման հետաձգման ցանկացած հայտ տվյալ տրանշի նկատմամբ ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, եթե այն ներկայացվել է հատկացման օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

Նշանակված օրը և հատկացման օրը Հոդված 1.04-ում նշված պայմաններից որևէ մեկը բավարարված չլինելու դեպքում հատկացումը կհետաձգվի մինչև Բանկի և Վարկառուի միջև պայմանավորված ժամկետը, որը կլինի ոչ շուտ, քան հատկացման բոլոր պայմաններն ապահովելու օրվանը հաջորդող 7-րդ աշխատանքային օրը (առանց Հոդվածի 1.06Բ-ի համաձայն Վարկի չհատկացված մասնաբաժինն ամբողջությամբ կամ մասամբ ժամանակավորապես դադարեցնելու և/կամ չեղյալ հայտարարելու՝ Բանկի իրավունքը խախտելու): Նման դեպքում Վարկառուն պետք է Բանկին վճարի հետաձգման հատուցում, որը հաշվարկվում է հետաձգված հատկացման գումարի հիման վրա:

1.05Բ 6 (վեց) ամսով հետաձգված հատկացումը չեղյալ հայտարարելը

Բանկն իրավունք ունի, այդ մասին գրավոր ծանուցելով Վարկառուին, չեղյալ հայտարարել Հոդված 1.05Ա-ի համաձայն ընդհանուր առմամբ ավելի քան 6 ամսով հետաձգված հատկացումը: Չեղյալ հայտարարված հատկացման գումարը շարունակ հասանելի է մնում հատկացման համար՝ Հոդված 1.02 -ին համապատասխան:

1.06 Չեղյալ հայտարարելը և կասեցնելը

1.06Ա Վարկառուի չեղյալ հայտարարելու իրավունքը

Բանկը կարող է ցանկացած ժամանակ Վարկառուին ծանուցում ներկայացնելու միջոցով, անմիջապես չեղյալ հայտարարել, ամբողջությամբ կամ մասամբ, Վարկի չտրամադրված մասնաբաժինը: Ընդ որում, ծանուցումը չպետք է ոչ մի կերպ ազդեցություն ունենա վճարման Սահմանված ամսաթիվ ունեցող Ընդունված Տրանշին, որը կվճարվի ծանուցման օրվանից սկսած 7 աշխատանքային օրվա ընթացքում:

1.06Բ Բանկի կասեցնելու և չեղյալ հայտարարելու իրավունքը

(ա) Բանկն իրավունք ունի, այդ մասին Վարկառուին գրավոր ծանուցելով, կասեցնել և/կամ չեղյալ հայտարարել Վարկի չհատկացված բաժնեմասը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ընդ որում այդ որոշումն ուժի մեջ կարող է մտնել անմիջապես, 4.03Ա կամ 10.01 հոդվածներում նշված հանգամանքներից կամ իրավիճակներից մեկի ի հայտ գալու դեպքում, որը հետագայում կամ սույն Համաձայնագրի համաձայն ծանուցում ներկայացնելուց հետո կարող է առաջացնել 4.03Ա հոդվածում նշված իրավիճակ կամ 10.01 հոդվածում նշված չվճարման (դեֆոլտի) դեպք:

(բ) Բանկը նաև ի վավունք ունի շուկայի ապակայունացման դեպքում կասեցնել Վարկի այն բաժնեմասը, որի վերաբերյալ այն չի ստացել հատկացման ընդունման ծանուցում, ընդ որում այդ մասին որոշումը կարող է ուժի մեջ մտնել անմիջապես:

(գ) Ցանկացած կասեցում ուժի մեջ է մնում մինչև Բանկի կողմից այն դադարեցնելու կամ կասեցված գումարը չեղյալ հայտարարելու որոշում կայացնելը:

1.06Գ Տրանշի կասեցման և չեղյալ հայտատրելու համար նախատեսված հատուցումը

1.06Գ(1) ԿԱՍԵՑՈՒՄ

Հատուցման ենթակա կանխավճարային դեպքի կամ 10.01 հոդվածով նախատեսված իրավիճակի առաջացման պատճառով Բանկի կողմից ընդունված տրանշը կասեցնելու դեպքում, Վարկառուն պետք է Բանկին վճարի հետաձգման հատուցում, որը հաշվարկվում է կասեցված հատկացման գումարի հիման վրա:

1.06Գ(2) ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

Եթե Վարկառուն Հոդվածին 1.06Ա-ին համապատասխան չեղյալ է հայտարարում.

(ա) ֆիքսված տոկոսադրույքով տրանշը, որը հաստատված տրանշ է, Վարկառուն պետք է հատուցում կատարի Բանկին Հոդված 4.02Բ-ով սահմանված կարգով;

(բ) լողացող տոկոսադրույքով ընդունված տրանշը կամ Վարկի որևէ այլ բաժնեմասը, որը ընդունված տրանշի մաս չի հանդիսանում, ապա հատուցում չի կատարվում:

Եթե Բանկը չեղյալ է հայտարարում.

(i) հատուցելի կանխավճարային դեպքի, էական բացասական փոփոխության կամ Հոդված 1.05Բ-ում նշված դեպքի պատճառով ֆիքսված տոկոսադրույքով տրանշը, որը հաստատված տրանշ է, ապա Վարկառուն պետք է Բանկին վճարի կանխավճարային հատուցումը, կամ եթե Բանկը չեղյալ է հայտարարում

(ii) ընդունված տրանշը Հոդված 10.01-ում նշված դեպքի առաջացման պատճառով, ապա Վարկառուն Բանկին հատուցում է Հոդված 10.03-ով սահմանված կարգով:

Բացառությամբ վերոնշյալ դեպքերի, Բանկի կողմից տրանշը չեղյալ հայտարարելու բոլոր այլ դեպքերում հատուցում չի վճարվում:

Հատուցումը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝ չեղյալ հայտարարված գումարը համարվում է հատկացված և մարված ժամանակացույցով սահմանված հատկացման օրը կամ այնքանով, որքանով տվյալ պահին տրանշի հատկացումը հետաձգված կամ կասեցված է՝ չեղյալ հայտարարելու ծանուցումն ստանալու օրվա դրությամբ:

1.07 Վարկի ժամկետը լրանալուց հետո չեղյալ հայտարարելը

Միջոցների ստացման վերջնաժամկետին հաջորդող օրը, եթե Բանկի կողմից գրավոր կերպով այլ պայման չի նախատեսվել, Վարկի այն բաժնեմասը, որի վերաբերյալ Հոդվածի 1.02Գ-ի համաձայն հատկացման ընդունման ծանուցում չի կատարվել, ինքնաբերաբար չեղյալ կհայտարարվի՝ առանց Բանկի կողմից Վարկառուին որևէ ծանուցում ուղարկելու և առանց Կողմերից որևէ մեկի նկատմամբ որևէ պարտավորություններ առաջացնելու:

1.08 Գնահատման վարձավճար

Վարկառուն վճարում կամ ապահովում է Պայմանագրի ստորագրման պահից 15 օրվա ընթացքում գնահատման վարձավճարի վճարումը Բանկին, որը կատարվում է Ծրագրի հետ կապված բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց: Գնահատման վարձավճարի գումարը կազմում է 50,000 եվրո (հիսուն հազար եվրո):

1.09 Հոդվածի 1-ի համաձայն վճարվելիք գումարները

Հոդվածներ 1.05, 1.06 և 1.08-ով նախատեսված գումարները ենթակա են վճարման եվրոյով: Դրանք պետք է վճարվեն Վարկառուի կողմից Բանկի պահանջագիրն ստանալուց հետո 15 օրվա կամ Բանկի պահանջագրում նշված ավելի երկար ժամկետի ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 2

Վարկը

2.01 Վարկի գումարը

Վարկը կազմված է տրանշերից, որոնք վարկի շրջանակներում հատկացվում են Բանկի կողմից՝ համաձայն Բանկի կողմից հաստատված Հոդված 2.03-ի:

2.02 Ետ վճարման համար սահմանված փոխարժեք, տոկոս և այլ գանձումներ

Յուրաքանչյուր տրանշի տոկոսները, ետ վճարումները և այլ գանձումները կվճարվեն Վարկառուի կողմից եվրոյով:

Ցանկացած այլ վճարում կկատարվի Բանկի կողմից սահմանված փոխարժեքով՝ հաշվի առնելով ծախսերի փոխարժեքը, որը կփոխհատուցվի վճարման միջոցով:

2.03 Բանկի կողմից հաստատումը

Յուրաքանչյուր տրանշի վճարումից հետո 10 օրվա ընթացում Բանկը Վարկառուին կփոխանցի ամորտիզացիայի (մասնամարելիության) աղյուսակը՝ համաձայն Հոդված 4.01-ի, անհրաժեշտության դեպքում նշելով վճարման օրը, վճարված գումարի փոխարժեքը և այդ տրանշի ետ վճարման պայմաններն ու տոկոսադրույքը:

ՀՈԴՎԱԾ 3

Տոկոսադրույքը

3.01 Դրույքաչափը

Ֆիքսված տոկոսադրույքները և սպրեդները հասանելի են առնվազն 4 տարի ժամկետով կամ, այդ ժամանակահատվածում հիմնական վարկի չմարման դեպքում՝ առնվազն 3 տարի ժամկետով:

3.01Ա Ֆիքսված դրույքաչափով տրանշեր

Վարկառուն տոկոսադրույքի վճարումը մասերով կատարում է ֆիքսված դրույքաչափով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռին՝ ֆիքսված տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով՝ հատկացման առաջարկում նշված համապատասխան վճարման օրը՝ սկսած տրանշի հատկացման օրվանը հաջորդող առաջին վճարման օրվանից: Եթե հատկացման օրվա և առաջին վճարման օրվա միջև ժամանակահատվածը 30 օր կամ պակաս է, ապա այդ ժամանակահատվածում կուտակված շահութաբաժնի վճարումը հետաձգվում է մինչև հաջորդ վճարման օր: Շահութաբաժինը հաշվարկվում է Հոդված 5.01(ա)-ով սահմանված կարգով՝ ֆիքսված դրույքաչափի տարեկան տոկոսադրույքով:

3.01Բ Լողացող դրույքաչափով տրանշեր

Յուրաքանչյուր չվճարված հաշվի դիմաց Վարկառուն համապատասխան վճարման օրվա դրությամբ ժամկետանց պարտքի համար կվճարի տոկոսներ կիսամյակային լողացող դրույքաչափով՝ համաձայն Հատկացման Առաջարկում սահմանված տրանշի Հատկացման օրվան հաջորդող առաջին օրվանից սկսած: Եթե վճարման օրվանից մինչև առաջին վճարումը 30 օր է կամ դրանից պակաս, ապա կուտակված տոկոսների վճարումը կհետաձգվի մինչև հաջորդ վճարման ամսաթիվը:

Բանկը Վարկառուին կձանուցի լողացող դրույքաչափի մասին՝ յուրաքանչյուր լողացող դրույքաչափի սկզբնական ժամանակահատվածի սահմանումից հետո 10 օրվա ընթացքում:

Եթե, համաձայն Հոդված 1.05-ի և 1.06-ի, Տրանշի ցանկացած լողացող դրույքաչափ կիրառվի վճարման սահմանված ամսաթվից հետո, ապա լողացող դրույքաչափի սկզբնական ժամանակահատվածի համար կիրառելի EURIBOR-ով տոկոսադրույքը կսահմանվի այնպես, թե հատկացումը տեղի է ունեցել Հատկացման սահմանված օրվա դրությամբ:

Յուրաքանչյուր լողացող դրույքաչափի ժամանակահատվածի համար տոկոսը կհաշվարկվի՝ համաձայն Հոդված 5.01-ի (բ)-ի:

3.02 Տոկոսներ ժամկետանց գումարների դիմաց

Չհակասելով Հոդված 10-ում նշված դրույթներին և բացառելով Հոդված 3.01-ը, սույն պայմանագրի դրույթների ներքո վճարվելիք ցանկացած ժամկետանց գումարների դիմաց կավելացվեն տոկոսներ՝ վճարման ենթակա օրվանից ընդհուպ մինչև վճարման օրը: Վերջիններս կհաշվարկվեն համապատասխան միջբանկային տոկոսադրույքին համարժեք տարեկան տոկոսադրույքով, +2% (200 հիմնակետ) և կվճարվեն Բանկի պահանջի համաձայն: Համապատասխան EURIBOR տոկոսադրույքը սահմանելու նպատակով սույն Հոդված 3.02-ի առնչությամբ ժամանակացույց B-ի շրջանակներում համապատասխան ժամանակաշրջանները պետք է լինեն մեկ ամիս հաջորդական ժամանակաշրջաններ՝ պատշաճ ամսաթվից սկսած:

Այնուամենայնիվ, ֆիքսված դրույքաչափով տրանշով հատկացված որևէ ուշացած գումարի համար կուտակված շահութաբաժինը պետք է վճարվի տարեկան տոկոսադրույքով, որը համարվում է Հոդված 3.01Ա-ում նշված դրույքաչափը՝ գումարած 0.25% (25 բազիսային միավոր), եթե այդ տարեկան դրույքաչափը ցանկացած տվյալ ժամանակահատվածի համար գերազանցում է նախորդ կետում նշված դրույքաչափը:

Եթե ուշացած գումարի արժույթը տարբերվում է Վարկի արժույթից, ապա կիրառվում է հետևյալ տարեկան դրույքաչափը՝ համապատասխան միջբանկային դրույքաչափը, որը սովորաբար կիրառվում է Բանկի կողմից այդ արժույթով կատարվող գործարքների համար՝ գումարած 2% (200 բազիսային միավոր)՝ հաշվարկված այդպիսի դրույքաչափի համար գործող շուկայական պրակտիկային համապատասխան:

3.03 Շուկայի ճեղքվածքի իրավիճակներ

Տվյալ ընդունված տրանշի առնչությամբ, այդ տրանշի վերաբերյալ Բանկի կողմից հատկացման ընդունման ծանուցումն ստանալու պահից մինչև ժամանակացույցով սահմանված հատկացման օրվանը նախորդող երկու օրը ընկած ժամանակահատվածում շուկայի ապակայունացման դեպքում Բանկը կարող է Վարկառուին տեղեկացնել նշված դրույթի կիրառման մասին: Նման դեպքերում կիրառվում է հետևյալ կանոնները՝ այդպիսի ընդունված տրանշի համար մինչև մարման վերջնաժամկետը գործող տոկոսադրույքը պետք է լինի Բանկի կողմից սահմանված սպրեդը կամ ֆիքսված դրույքաչափը (արտահայտված տարեկան տոկոսադրույքով) և հանդիսանում է համապատասխան տրանշի ֆինանսավորման՝ Բանկի ընդհանուր ծախսը, որը հիմնված է Բանկի ներքին համակարգում գեներացված կիրառվելիք բազային դրույքաչափի վրա կամ Բանկի կողմից ընտրված՝ դրույքաչափի որոշման այլընտրանքային մեթոդի հիման վրա: Վարկառուն իրավունք ունի ծանուցագրում նշված ժամկետներում գրավոր եղանակով հրաժարվել այդպիսի հատկացումից՝ կրելով արդյունքում ծագած ծախսերը, եթե այդպիսիք առաջացել են, որի դեպքում Բանկը չի իրականացնում հատկացումը, և համապատասխան Վարկը հասանելի կմնա հատկացման համար՝ Հոդված 1.02Բ-ի ներքո: Եթե Վարկառուն սահմանված ժամկետներում չի հրաժարվում հատկացումից, կողմերը պայմանավորվում են հատկացման ուժի մեջ մնալու և դրա հետ կապված պայմեններն ամբողջությամբ կատարելու մասին:

Հատկացման առաջարկում Բանկի կողմից նախկինում նշված սպրեդը կամ ֆիքսված դրույքաչափն այլևս չեն գործի:

ՀՈՂՎԱԾ 4

Մարում

4.01 Վարկի մարումը մասերով

- (ա) Վճարման առաջարկում սահմանված վճարման օրերին Վարկառուն յուրաքանչյուր Տրանշը կվճարի մասնաբաժիններով՝ համաձայն Հոդված 2.03-ում նշված ամորտիզացիայի աղյուսակի
- (բ) Ամորտիզացիայի ժամանակացույցը կազմվում է հետևյալ կարգով.
 - (i) ֆիքսված դրույքաչափով տրանշի դեպքում մարումը կատարվում է կիսամյակային կտրվածքով՝ վարկի հիմնական գումարի մասնաբաժիններով;
 - (ii) լողացող դրույքաչափով տրանշի դեպքում մարումը կատարվում է կիսամյակային կտրվածքով՝ վարկի հիմնական գումարի մասնաբաժիններով;
 - (iii) Յուրաքանչյուր տրանշի ետ վճարումը կկատարվի Հատկացման սահմանված քառամյա ժամկետին անմիջապես հաջորդող առաջին վճարման օրվանից ոչ ուշ ընկած վճարման օրը յուրաքանչյուր տրանշի մարման առաջին օրն է սահմանվում վճարման օրը, որն ընկնում է ժամանակացույցով սահմանված հատկացման օրվանը հաջորդող 60-րդ օրվա և տրանշի՝ ժամանակացույցով սահմանված հատկացման 7-րդ տարեկիցին անմիջապես հաջորդող առաջին վճարման օրվա միջև; և
 - (iv) Վերջին ետ վճարումը կկատարվի Հատկացման սահմանված օրվանից ոչ շուտ, քան 4 տարի և ոչ ուշ, քան 25 տարի:

4.02 Կանխավճարի կանխավճար

4.02A Կանխավճարի տարբերակ

Համաձայն 4.02B-ի, 4.02C-ի և 4.04 Հոդվածների՝ Վարկառուն կարող է կանխավ մասամբ կամ ամբողջովին վճարել ցանկացած Տրանշ՝ ներառյալ ավելացված տոկոսները և կորուստները՝ (եթե առկա են) առնվազն մեկ ամիս առաջ ուղարկելով ծանուցում, որում կնշվի կանխավճարի գումարի չափն ու ամսաթիվը:

Կանխավճարի ծանուցումը համարվում է պարտադիր և անփոփոխ՝ համաձայն Հոդված 4.02C-ի:

4.02Բ Կանխավճարի փոխհատուցում

4.02Բ(1) ՖԻՔՍՎԱԾ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ՏՐԱՆՇ

Եթե Վարկառուն մարում է ֆիքսված դրույքաչափով տրանշը, Վարկառուն Բանկին վճարում է կանխավճարի փոխհատուցումը Կանխավճարի ամսաթվին:

4.02Բ(2) ԼՈՂԱՑՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ՏՐԱՆՇ

Եթե Վարկառուն կարող է մարել լողացող դրույքաչափով տրանշը առանց փոխհատուցման կամ համապատասխան Կանխավճարի ամսաթվի:

4.02Գ Կանխավճարի կատարման կարգը/կառուցվածքը

Բանկը կանխավճարի ամսաթվից ոչ ուշ քան 15 օր առաջ Վարկառուին պետք է ծանուցի կանխավճարի գումարի չափի, ինչպես նաև վճարման ենթակա ավելացված տոկոսների և Հոդված 4.02Բ-ի ներքո վճարվելիք հատուցման գումարի կամ, հնարավոր է նաև փոխհատուցում չկատարելու մասին:

Վարկառուն մինչև սահմանված վերջնաժամկետը Բանկին կծանուցի այն մասին, որ,

(ա) կամ հաստատում է կանխավճարի ծանուցումը՝ Բանկի կողմից սահմանված դրույթների համաձայն,

(բ) կամ չեղյալ է համարում Կանխավճարի մասին ծանուցումը

Եթե Վարկառուն՝ համաձայն վերոնշյալ (ա) պարբերության հաստատի ծանուցումը, ապա կանխավճարը կհամարվի ուժի մեջ, իսկ եթե չեղյալ համարի կամ ժամանակին չկարողանա հաստատել՝ այն կհամարվի անվավեր: Համաձայն վերոնշյալի՝ կանխավճարի ծանուցումը կհամարվի պարտադիր և անփոփոխ:

Կանխավճարի հետ միասին Վարկառուի կողմից վճարվում է կանխավճարի գումարից առաջացած շահութաբաժնի և, առկայության դեպքում, հատուցման (տույժի) գումարը:

4.03 Պարտադիր կանխավճար

4.03Ա Կանխավճարի հիմքերը

4.03Ա(1) ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔԻ ԿՐՃԱՏՈՒՄ

Եթե Ծրագրի ընդհանուր արժեքը Մանրամասն նկարագիր 3-ում կետում նշված թվից կրճատվի, մինչև այն մակարդակի, որ Վարկի գումարը գերազանցի 50%-ը (50 տոկոս), Բանկը, ելնելով կրճատման չափից, կարող է անմիջապես չեղյալ հայտարարել Վարկի չհատկացված բաժնեմասը և/կամ պահանջել Վարկի կանխավճարը՝ Վարկառուին ծանուցում ներկայացնելուց հետո: Վարկառուն կատարում է պահանջված գումարի վճարումը Բանկի կողմից սահմանված ժամկետում՝ ոչ շուտ, քան պահանջը ներկայացնելու օրվանը հաջորդող 30-րդ օրը:

4.03Ա(2) ԱՅԼ ՀԱՄԱՐԺԵՔ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԿ

Եթե Վարկառուն կամավոր կարգով կանխավճար է կատարում՝ մասնակիորեն կամ ամբողջությամբ (կասկածներից խուսափելու համար կանխավճարը, այն դեպքում, եթե կիրառելի է, պետք է ներառի վերագնում կամ չեղյալ հայտարարածություն) այն վարկի դիմաց, որը նրան սկզբնապես հատկացվել է ավելի քան 5 տարի ժամկետով (**“Ժամկետային վարկ”**) այլ կերպ ասած եթե կանխավճարի այն վարկի փոխարեն, որը տրվել է առնվազն հավասար ժամկետով, Բանկը, Վարկառուին ծանուցում ներկայացնելուց հետո, կարող է չեղյալ հայտարարել Վարկը և պահանջել կանխավճար ժամկետային բոլոր վարկերի ընդհանուր չմարված գումարի չափով:

Սույն հոդվածի իմաստով, “վարկ” հասկացությունը ներառում է ցանկացած վարկ, պարտքային պարտավորություն կամ որևէ այլ ֆինանսական պարտավորություն, որը ենթադրում է դրամական միջոցների վճարում կամ հատուցում:

4.03Ա(3) ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարկառուն պարտավորվում է անմիջապես Բանկին տեղեկացնել այն մասին, թե արդյոք Շահագործողի կողմից առաջացել կամ կարող է առաջանալ վերահսկման որևէ փոփոխություն: Եթե Բանկը իսկապես համոզվի, որ առկա է նման փոփոխություն, Վարկառուից կպահանջի անցկացնել խորհրդակցություն: Սույն խորհրդակցությունը տեղի կունենա Բանկի պահանջ ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Վերոնշյալ խորհրդակցություն ներկայացնելու պահանջից (ա) 30 օր հետո կամ (բ) նախատեսված վերահսկողության փոփոխության դեպքում Բանկը, Վարկառուին ծանուցման միջոցով, կարող է չեղյալ համարել Վարկը և պահանջել կանխավճար՝ ավելացված/լրացուցիչ տոկոսներով և սույն պայմանագրում նշված բոլոր ավելացված և չվճարված գումարներով հանդերձ: Վարկառուն պետք է վճարի պահանջված գումարները Բանկի կողմից սահմանված ամսաթվին, որը կընկնի պահանջի ներկայացման օրվանից ոչ շուտ քան 30 օր հետո:

Համաձայն սույն Հոդվածի՝

- (ա) “**Վերահսկողության փոփոխություն**” առաջանում է այն դեպքում, երբ
 - (i) գործակցող որևէ անձ կամ խումբ հանձն են առնում Շահագործողի նկատմամբ վերահսկողությունն իրականացնել, կամ
 - (ii) վարկառուն դադարում է (x) վերահսկել Շահագործողին, կամ (y) հանդիսանալ Շահագործողի կողմից թողարկված բաժնետիրական կապիտալի 100%-ի ուղղակի կամ անուղղակի շահառու սեփականատեր՝ մասնաճյուղերի միջոցով:
- (բ) <<**Համագործակցել**>> նշանակում է համատեղ գործել՝ ըստ համաձայնագրի կամ փոխհամաձայնության (գրավոր կամ բանավոր ձևով) և,
- (գ) <<**Վերահսկում**>>-ը իրավունք է ղեկավարելու ընկերության կառավարումը և քաղաքականությունը՝ քվեարկու կապիտալի սեփականցման, պայմանագրի կամ այլ միջոցներով:

4.03Ա(4) ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարկառուն հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնում է Բանկին օրենքի փոփոխության դեպքի ի հայտ գալու կամ այդպիսի դեպքի հավանականության առաջանալու մասին՝ Վարկառուի կամ Շահագործողի մասով: Նման դեպքում, կամ եթե Բանկը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ ի հայտ է եկել օրենքի փոփոխության դեպք կամ այդպիսի դեպքի հավանականություն է առաջացել, այն կարող է Վարկառուին առաջարկել քննարկման ենթարկել ծագած խնդիրը: Այդ քննարկումները պետք է անցկացվեն Բանկի առաջարկությանը հաջորդող 30 օրվա ընթացքում: Եթե քննարկումներ անցկացնելու մասին առաջարկության պահից 30 օրը լրանալուն պես Բանկը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ օրենքի փոփոխության բացասական ազդեցությունը չի կարող նվազեցվել մինչև իրեն բավարարող մակարդակը, Բանկը, Վարկառուին տեղեկացնելով, կարող է չեղյալ հայտարարել Վարկի չհատկացված բաժնեմասը և պահանջել կատարել Վարկի կանխավճար՝ կուտակված տոկոսադրույքի և սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր այլ կուտակված կամ չվճարված գումարների հետ միասին:

Վարկառուն պետք է վճարի պահանջված գումարները Բանկի կողմից սահմանված ամսաթվին, որը կընկնի պահանջի ներկայացման օրվանից ոչ ուշ, քան 30 օր հետո:

Համաձայն սույն Հոդվածի՝ <<Օրենքի փոփոխություն>> նշանակում է ցանկացած օրենքի/ում, կանոնների կամ կանոնակարգերում ընդունման, հրապարակման, կատարման, վավերականացման առնչությամբ ցանկացած փոփոխություն կամ լրացում (ցանկացած օրենքի, կանոնի կամ կանոնակարգի կիրառման կամ պաշտոնական մեկնաբանության մեջ), որոնք ի հայտ են գալիս սույն Պայմանագրի կնքումից հետո, և որը, Բանկի կարծիքով, էական բացասական ազդեցություն կգործի Վարկառուի կողմից սույն Ֆինանսավորման Պայմանագրով սահմանված պահանջները կատարելու կամ Շահագործողի կողմից՝ Ծրագրի իրականացման համաձայնագրով սահմանված պահանջները կատարելու կարողության վրա կամ կառաջացնի կամ կարող է առաջացնել էական բացասական փոփոխություն:

4.03Ա(5) ԱՆՕՐԻՆՆՈՒԹՅՈՒՆ; ԵՎ ԵՐԱՇԽԻՔ

Եթե.

(ա) ցանկացած իրավական համակարգում Բանկի համար անօրինական է դառնում սույն Պայմանագրով սահմանված իր պարտականությունների կատարումը կամ սույն Վարկի ֆինանսավորումը կամ սպասարկումը, կամ

(b) ԵՎ երաշխիքի հետ կապված՝

(i) այն կորցնում է իր ուժը կամ դադարում է գործել իր լրիվ ուժով;

(ii) դրանով նախատեսված երաշխավորման պայմանները չեն կատարվում; կամ

(iii) այն իր պայմաններին համապատասխան արդյունավետ չի գործում կամ իր պայմաններին համապատասխան արդյունավետ չի գործում՝ Վարկառուի պնդմամբ,

Բանկն այդ մասին անմիջապես տեղեկացնում է Վարկառուին և կարող է (x) անհապաղ կասեցնել կամ չեղյալ հայտարարել Վարկի չհատկացված բաժնեմասի հատկացումը և/կամ (y) պահանջել Վարկի կանխավճար կատարել՝ Վարկառուին ուղղված իր ծանուցագրում նշված ժամկետներում:

4.03Ա(6) ՎԵՐԱՀԱՏԿԱՑՎԱԾ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Վարկի չմարված լինելու ընթացքում Շահագործողի կողմից Ծրագիրը ֆինանսավորելու նպատակով Վարկառուին վերահատկացված Վարկի համար կանխավճար կատարելու դեպքում, Բանկը՝ Վարկառուին այդ մասին հայտնելով, կարող է չեղյալ հայտարարել Վարկի չհատկացված բաժնեմասի հատկացումը և պահանջել կատարել Վարկի կանխավճար՝ կուտակված տոկոսադրույքի և սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր այլ կուտակված կամ չվճարված գումարների հետ միասին:

4.03Բ Կանխավճարի կառուցվածքը

Բանկի կողմից Հոդվածի 4.03-ի համաձայն պահանջվող ցանկացած գումար՝ սույն Համաձայնագրով նախատեսված բոլոր այլ կուտակված կամ չվճարված գումարների հետ միասին, ինչպես նաև 4.03Գ հոդվածի համաձայն վճարման ենթակա ցանկացած հատուցում (տույժ), պետք է վճարվի Բանկի կողմից ներկայացված պահանջագրում նշված ժամկետներում:

4.03Գ Կանխավճարի փոխհատուցում

Փոխհատուցման կանխավճարային դեպքի պայմաններում, փոխհատուցումը, եթե այդպիսին կա, կատարվում է Հոդվածին 4.02Բ-ին համապատասխան:

Եթե, Հոդվածի 4.03Ա որևէ դրույթի համաձայն, Վարկառուն կանխավճար է կատարում տրանշի համար համապատասխան վճարման օրվանից տարբերվող որևէ այլ օր, Վարկառուն փոխհատուցում է Բանկին՝ վերջինիս կողմից սահմանված գումարի այնպիսի չափով, որը բավարար կլինի ոչ վճարման օրը գումարներն ստանալու դիմաց փոխհատուցման համար:

4.04 Ընդհանուր

Կանխավճարի գումարը չի կարող կրկին փոխառվել: Հոդվածի 4-ի դրույթները չպետք է հակասեն Հոդվածի 10-ի դրույթներին:

ՀՈԴՎԱԾ 5

Վճարումներ

5.01 Օրերի հաշվարկման մեթոդ

Սույն համաձայնագրի շրջանակներում Վարկառուի կողմից տոկոսների, փոխհատուցման կամ վճարման միջոցով ստացվող գումարները, որոնք հաշվարկվում են տարվա կտրվածքով, կսահմանվեն հետևյալ մեթոդներով

(ա) Ֆիքսված տոկոսադրույքով տրանշի շրջանակներում տոկոսադրույքի և փոխհատուցումների առնչությամբ՝ մեկ տարի՝ 360 օր (երեք հարյուր վաթսուն) և մեկ ամիս՝ 30 օր (երեսուն);

- (բ) Լողացող տոկոսադրույքով տրանշի շրջանակներում տոկոսադրույքի և փոխհատուցումների առնչությամբ՝ մեկ տարի՝ 360 օր (երեք հարյուր վաթսուն) և անցած օրերի թիվը;
- (գ) վճարների առնչությամբ՝ մեկ տարի՝ 360 օր (երեք հարյուր վաթսուն) և անցած օրերի թիվը:

5.02 Վճարումների տեղը և ժամանակը

Տոկոսներից, փոխհատուցումից և հիմնագումարից բացի այլ գումարները Վարկառուի կողմից կվճարվեն Բանկի պահանջի ստացականի ընդունումից հետո 7 օրվա ընթացքում:

Սույն համաձայնագրի շրջանակներում Վարկառուի կողմից վճարվելիք յուրաքանչյուր գումար կվճարվի Բանկի կողմից ծանուցված համապատասխան հաշվին: Բանկը կնշի հաշիվը՝ Վարկառուի կողմից առաջին վճարման ենթակա օրվան նախորդող առնվազն 15 օր հետո, իսկ հաշվի ցանկացած փոփոխման դեպքում կծանուցի փոփոխման համար կիրառվող առաջին վճարման օրվան նախորդող առնվազն 15 օր հետո: Ծանուցման տվյալ ժամանակահատվածը չի կիրառվում Հոդված 10-ի ներքո վճարման դեպքում:

Վարկառուի կողմից վճարման ենթակա գումարը կհամարվի վճարված, երբ Բանկը ստանա այն:

5.03 Վարկառուի կողմից հաշվանցման չներկայացում

Սույն Համաձայնագրով Վարկառուի կողմից կատարվելիք բոլոր վճարումները պետք է հաշվարկվեն և կատարվեն առանց որևէ հաշվանցման կամ հակահայցի (ինչպես նաև առանց որևէ պահում դրանց դիմաց):

5.04 Վճարային համակարգերի խաթարում

Եթե Բանկը որոշում է (իր հայեցողությամբ), որ առաջացել է խաթարման դեպք կամ այդպիսի դեպք առաջանալու մասին տեղեկացվում է Վարկառուի կողմից, ապա

- (ա) Բանկը կարող է, իսկ Վարկառուի պահանջի դեպքում՝ պարտավոր է խորհրդակցել վերջինիս հետ՝ համաձայնեցնելով Վարկառուի հետ Պայմանագրի իրականացման կամ կիրարկման ընթացքում առաջացած փոփոխությունները, ինչպես Բանկը կարող է անրաժեշտ համարել ստեղծված հանգամանքներում;
- (բ) Բանկը պարտավոր չէ Վարկառուի հետ խորհրդակցել պարբերությունում կատարված որևէ փոփոխության առնչությամբ, (ա) եթե, իր կարծիքով, դա առկա պայմաններում նպատակահարմար չէ և, ցանկացած դեպքում, պարտավոր չէ համաձայնել այդպիսի փոփոխությունների հետ, և
- (գ) Բանկը պատասխանատվություն չի կրում խաթարման դեպքի հետևանքով առաջացած վնասների, ծախսերի կամ կորուստների, կամ սույն Հոդված 5.04-ի համաձայն կամ դրա հետ կապված՝ որևէ միջոց ձեռնարկելու կա չձեռնարկելու համար:

5.05 Ստացված գումարների օգտագործում

- (ա) Ընդհանուր դրույթներ

Վարկառուից ստացված գումարներն ազատում են իրեն իսկ վճարային պարտավորություններից միայն այն դեպքում, եթե դրանք ստացվել են սույն Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան:

(բ) Մասնակի վճարումներ

Եթե Բանկին կատարված վճարումը բավարար չէ սույն Պայմանագրով Վարկառուի կողմից վճարման ենթակա գումարների մարման համար, ապա Բանկը կկիրառի այդ վճարումը հետևյալ վճարումների դիմաց.

- (i) առաջինը՝ սույն Պայմանագրով նախատեսված չիրականացված վճարների, ծախսերի և փոխհատուցումների համամասնական վճարումների դիմաց;
- (ii) երկրորդը՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա, սակայն չվճարված կուտակված տոկոսադրույքի դիմաց;
- (iii) երրորդը՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա, սակայն չվճարված հիմնական գումարի դիմաց, և
- (iv) չորրորդը՝ սույն Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա, սակայն չվճարված ցանկացած այլ գումարի դիմաց:

(գ) Տրանշերի հետ կապված գումարների բաշխում

(i)

- մի քանի մասնաբաժիններով մարման ենթակա Տրանշի՝ ոչ պարտադիր կարգով մասնակի կանխավճարման դեպքում կանխավճարի գումարն կիրառվում է համամասնորեն՝ մարման ենթակա յուրաքանչյուր մասնաբաժնի դիմաց,
- մի քանի մասնաբաժիններով մարման ենթակա տրանշի՝ պարտադիր կարգով մասնակի կանխավճարման դեպքում կանխավճարի գումարն կիրառվում է՝ կրճատելով չվճարված մասնաբաժինները՝ մարման հետընթաց կարգով:

(ii) Հոդված 10.01-ում նշված պահանջի ներկայացման դեպքում Բանկի կողմից ստացված և տրանշի դիմաց ընդունված գումարները կրճատում են մարման ենթակա մասնաբաժինները՝ մարման հետընթաց կարգով: Բանկը Տրանշերի միջև ընկած ժամանակահատվածում ստացած գումարները կարող է օգտագործել իր հայեցողությամբ:

(iii) Այնպիսի գումարների ստացման դեպքում, որոնց կիրառելիությունը որևէ տրանշի նկատմամբ չի կարող որոշվել, և որոնց օգտագործման վերաբերյալ Բանկի և Վարկառուի միջև որևէ պայմանավորվածություն չի գործում, Բանկն այդ գումարները կարող է օգտագործել Տրանշերի միջև՝ իր հայեցողությամբ:

Հոդված 6.

Վարկառուի պարտավորությունները և փաստերի ներկայացումը

Սույն Հոդված 6-ի պարտավորությունները վավեր են սույն Պայմանագրի ամսաթվից սկսած այնքան ժամանակ, մինչև այս Պայմանագրի ներքո ցանկացած գումար վճարված չէ, կամ քանի դեռ Վարկը ուժի մեջ է:

6.01 Վարկի օգտագործումը և այլ ֆոնդերի հասանելիությունը

Վարկառուն պետք է օգտագործի և երաշխավորի, որ Շահագործողն տրամադրված վարկը բացառապես օգտագործում է Ծրագրի իրականացման նպատակով: Վարկառուն պարտավոր է ապահովել, որ այն մատչելի է, և Շահագործողն ունի բավարար միջոցները թվարկված Մանրամասն նկարագիր (3)-ում, և որ նման միջոցները օգտագործված են այնքանով, որքան անհրաժեշտ է, ծրագրի ֆինանսավորման նպատակով:

6.02 Ծրագրի ավարտը

Վարկառուն պետք է հաստատի, որ Շահագործողը Ծրագիրն իրականացում է համաձայն ՏՆ-ի, որը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխվել Բանկի հաստատմամբ, և ավարտվի մինչև սույնով սահմանված վերջնական ամսաթիվը:

6.03 Ծրագրի ավելացված արժեք

Եթե Ծրագրի ընդհանուր արժեքը գերազանցի Նկարագիր (3)-ում նշված գումարի չափը, Վարկառուն, առանց Բանկին դիմելու, ձեռք կբերի միջոցներ՝ Ծրագրի հավելյալ ծախսերը վճարելու համար՝ համաձայն ՏՆ-ի դրույթների: Հավելյալ ծախսերի վճարման վերաբերյալ ծրագրերը անհապաղ պետք է ներկայացվեն Բանկին:

6.04 Գնումների ընթացակարգը

Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Շահագործողը միջազգային բաց մրցառքի կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգի միջոցով Ծրագրի համար ձեռք բերի սարքավորումներ, ապահովի ծառայությունների մատուցում և աշխատանքների ընթացակարգեր՝ համաձայն ՎՋԵԲ-ի գնումների կանոնների և այլ միջազգային ստանդարտների և ցանկացած այլ կանոնների՝ համաձայնեցված Ֆինանսավորման համաձայնագրում, Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության իշխանությունների միջև Բանկի կողմից հավանություն ստանալով:

6.05 Ծրագրի շարունակական պարտավորություններ

Վարկառուն պարտավորվում է ապահովել, որպեսզի Շահագործողը

(ա) Տեխնիկական սպասարկում՝ տեխնիկական սպասարկում է անցկացնում, վերանորոգում, մանրակրկիտ զննում և նորացնում Ծրագրի մաս կազմող ողջ սեփականությունը, քանի որ պահանջվում է այն լավ վիճակում պահել:

(բ) Ծրագրի ակտիվներ՝ միայն Բանկի կողմից նախապես տրված գրավոր համաձայնության դեպքում, ձեռք է բերում իրավունք, Ծրագրում ներառված հիմնականում ողջ ակտիվների սեփականության նկատմամբ և պատշաճորեն փոխարինում կամ նորացնում այդ ակտիվները, ինչպես նաև ապահովում Ծրագրի բնականոն գործունեությունը՝ համաձայն իր նախնական նպատակների: Բանկը կարող է ձեռնպահ մնալ իր համաձայնությունը տալուց միայն այն դեպքում, երբ առաջարկվող գործողությունը վնաս է հասցնում Բանկի՝ որպես Վարկատուից Վարկառու շահերին, կամ խոչընդոտում է Բանկի կողմից Ծրագրի ֆինանսավորմանը՝ Օրենսդրական ակտի կամ Եվրոպական միության գործունեության մասին Պայմանագրի Հոդված 309-ի ներքո:

(գ) Ապահովագրություն՝ ապահովագրում է Ծրագրի մաս կազմող բոլոր աշխատանքները և սեփականությունը առաջնակարգ ապահովագրական ընկերությունների միջոցով՝ ելնելով համապատասխան համապարփակ արդյունաբերական փորձից:

(դ) Իրավունքներ և թույլտվություններ՝ պաշտպանում է Ծրագրի իրականացման և կյանքի կոչման համար անհրաժեշտ տեղափոխման և օգտագործման բոլոր իրավունքներն ու թույլտվությունները, հավաստումներն ու լիազորությունները, և

(ե) Շրջակա միջավայր՝

- (i) իրականացնում և կյանքի է կոչում Ծրագիրը՝ համաձայն Շրջակա միջավայրի մասին Օրենքի,
- (ii) ձեռք բերում և պահպանում պահանջվող բնապահպանության թույլտվությունները Ծրագրի համար,
- (iii) համապատասխանում ցանկացած Բնապահպանության հաստատումներին, և
- (iv) պարտավորվում է իրականացնել և հավատարիմ մնալ Բնապահպանության և Սոցիալական Գործողությունների Ծրագրին (ESAP) (պետք է տրամադրվի Բանկին և՛ համաձայնության գալով ՎՋԵԲ-ի հետ), և հաշվետվություններ ներկայացնելով ՎՋԵԲ-ին՝ միաժամանակ տեղյակ պահելով ԵՆԲ-ին, (i) ցանկացած բնապահպանության կամ սոցիալական բացասական ազդեցությունը չի նախատեսվում ESAP-ի կողմից, (ii) որևէ ազդեցության մեղմացման միջոցներ համարվում են անբավարար՝ վերացնելով կամ նվազեցնելով ցանկացած Բնապահպանության կամ սոցիալական ազդեցության հետևանքներ, և (iii) ցանկացած էական անհամապատասխանություն ESAP-ի կամ որևէ այլ բնապահպանության և սոցիալական օրենքի առնչությամբ:

(զ) Եվրոպական Միության օրենսդրություն (պայմանական)

իրականացնում և կյանքի է կոչում Ծրագիրը՝ համաձայն ԵՄ օրենքների համապատասխան չափորոշիչների և Հայաստանի Հանրապետության օրենքների շրջանակներում կամ մինչև Պայմանագրի ամսաթիվը Բանկի կողմից սահմանված կարգով:

6.06 Միասնական պարտավորություններ

Վարկառուն երաշխավորում և պարտավորվում է, որպեսզի ոչ Վարկառուն ոչ Շահագործողը և ոչ էլ որևէ անձ, առանց իր նախնական համաձայնության չկատարեն հետևյալ գործողություններից և ոչ մեկը.

- (i) ոչ պատշաճ շահույթի առաջարկելը, տալը, ստանալը կամ միջնորդելը ազդելու համար այն անձի գործողության վրա, ով հանդիսանում է պետական պաշտոնատար անձ, պետական մարմնի կամ պետական ձեռնարկության կամ հասարակական միջազգային կազմակերպության տնօրեն կամ աշխատակից՝ կապված ցանկացած գնումների գործընթացի հետ կամ որևէ պայմանագիր իրականացնելիս, ինչպես նաև Ծրագրի այն բաղադրիչների հետ, որոնք բնութագրված են Տեխնիկական Նկարագրում.
- (ii) որևէ գործողություն, որն ազդում կամ կարող է անպատշաճ կերպով ազդել գնումների գործընթացի կամ Ծրագրի իրականացման վրա՝ ի վնաս Վարկառուի կամ Շահագործողի՝ ներառյալ գաղտնի համաձայնությունը մրցառքի մասնակիցների միջև:

Այս նպատակով Վարկառուն պետք է իրազեկված լինի Հոդված 12.01-ում նշված որևէ նման պաշտոնյայի, Շահագործողի կամ վերոգրյալ Հոդված 1.04Ա [(i)]-ում հղում կատարված խորհրդատուի յուրաքանչյուր ավագ աշխատակցի մասին: Վարկառուն Հանձնաժողովի կողմից նշված որևէ նման գործողության վերաբերյալ տեղեկատվություն կամ փաստեր ձեռք բերելու դեպքում պարտավորվում է տեղեկացնել Բանկին և ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ միջոցներ:

Վարկառուն պետք է հաստատի, կյանքի կոչի և իրականացնի ներքին ընթացակարգերը և վերահսկումը՝ համաձայն կիրառելի ազգային օրենքների և լավագույն փորձի, այն նպատակով, որպեսզի երաշխավորի որ ոչ մի գործարք չի կատարվել անհատներից կամ հաստատություններից որևէ մեկի օգտին, որոնք նշված են ԵՄ Անվտանգության Խորհրդի կամ նրա հանձնաժողովների կողմից հայտարարված հավատարմագրված անձանց նորացված ցանկում՝ համաձայն Անվտանգության Խորհրդի թիվ 1267 (1999), 1373 (2001)-ի Որոշումների (www.un.org/terrorism) և/կամ ԵՄ Խորհրդի կողմից՝ համաձայն իր Ընդհանուր Դիրքորոշումներ 2001/931/CFSP և 2002/402/CFSP-ի և դրանց հետ կապ ունեցող կամ հետնորդ որոշումների և/կամ գումարի վլացման կամ Ահաբեկչության դեմ ֆինանսավորում իրականացնելիս:

6.07 Ծրագրի իրականացման գրասենյակը

Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտները համակարգելու, ղեկավարելու, վերահսկելու և գնահատելու համար՝ ներառյալ ապրանքների ձեռքբերումը, Ծրագրի համար աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Շահագործողը, եթե այլ կերպ համաձայնեցված չէ Բանկի հետ, շարունակի Ծրագրի ողջ ընթացքում պահպանել իր տեղում Ծրագրի իրականացման Գրասենյակի (“ԾԻԳ”) համարժեքը՝ համապատասխան ռեսուրսներով և համապատասխանորեն որակավորված անձնակազմով, ինչպես նաև միջազգային խորհրդատուի միջոցով, ինչպես հղում է կատարված Հոդված 1.04A (i)-ում, Բանկին ընդունելի լիազորությունների շրջանակին համապատասխան:

6.08 ԵՆԲ վարկային հաշիվը

Վարկառուն ստանձնում է ԵՆԲ Վարկի հաշվի բացումը՝ Բանկից Վարկի միջոցները և Հանձնաժողովից ՀՆԾ դրամաշնորհները ստանալու նպատակով: Վարկառուն պարտավորվում է առանձնացնել ԵՆԲ Վարկի հաշիվը իր որևէ այլ ակտիվներից և ապահովել, որպեսզի վճարումները այս հաշվից կատարվեն միմիայն Ծրագրի իրականացման նպատակով՝ սույն Պայմանագրի և Ծրագրային Համաձայնագրի համաձայն: Այնուհետև, Վարկառուն պարտավորվում է ապահովել, որպեսզի ԵՆԲ Վարկի հաշիվը բոլոր ժամանակներում անվճարունակ չլինի, և որ Վարկառուի ոչ մի այլ վարկատու իրավունք չունենա գումար ստանալու այդ հաշվից:

6.09 Շահագործման և պարտքի սպասարկման սուբսիդավորում

Վարկառուն առնվազն տարին մեկ անգամ, մինչև նման ծախսերի մարման սակագնային ճշգրտումների կատարվելը, ինչպես հղում է կատարված Հոդված 6.10-ում, նախատեսում է Շահագործողին, Բանկի պահանջներին համապատասխան, տրամադրել գործող սուբսիդավորում, որը բավարար կլինի ծածկելու Շահագործողի ընթացիկ ծախսերը, մինչև նման ծախսերի մարման սակագնային ճշգրտումների կատարվելը, ինչպես հղում է կատարված Հոդված 6.10-ում: Վարկառուն պարտավոր է երաշխավորել, որ սուբսիդավորումը վճարվում է Շահագործողին այնպիսի ձևով և ժամանակին, ինչը թույլ կտա Շահագործողին (i) իրականացնել իր ֆինանսական պլանավորումը պատշաճ կերպով, և (ii) կատարել իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին: Գործառնական ծախսերի իր որոշման մեջ, Շահագործողի ակտիվների պահպանումը ներկայացնում է Շահագործողի գործառնական ծախսերի առնվազն 10 (տասը) տոկոսը (առանց պարտքի սպասարկման ծախսերի):

Վարկառուն պետք է նաև Շահագործողին տրամադրի պարտքի սպասարկման սուբսիդավորում՝ կապված միջազգային ֆինանսական կառույցներին Շահագործողի ցանկացած պարտքի հետ՝ հնարավորություն ընձեռելով Շահագործողին ժամանակին կատարել իր վճարման պարտավորությունները նման միջազգային ֆինանսական հաստատությունների նկատմամբ:

6.10 Սակագների փոփոխում

Վարկառուն պարտավոր է ապահովել, որ 2014թ. սկզբից Շահագործողը կատարի ջրամատակարարման սակագնի աստիճանական փոփոխում (ավելացում) այնքանով, որ 2016թ.-ից սկսած սակագներից ստացված հետագա եկամուտները պետք է ծածկեն Շահագործողի գործառնական ծախսերն և պարտքի սպասարկումն ու ծախսերը, որոնք առնչվում են Շահագործողի ակտիվների տեխնիկական սպասարկմանը (բացառությամբ այդ ակտիվների արժեզրկումը):

Եթե վերնշյալ սակագինը չի իրականացվում նախատեսված ժամանակահատվածում, մատչելիության սղության հետևանքով, ապա վարկառուն ինքը կամ պետք է երաշխավորի, որ Շահագործողը տրամադրի ընդունելի հիմնավորում սակագների ճշգրտման թարմեցված ծրագրի հետ մեկտեղ: Բանկը կարող է համաձայնել նման հետաձգմանը պայմանով, որ Վարկառուն անվերապահորեն պարտավորվում է Շահագործողին տրամադրել սուբսիդավորում՝ ծածկելու համար Շահագործողի ընթացիկ ծախսերը, ինչպես մանրամասն ներկայացված է վերոգրյալ Հոդված 6.09-ում:

6.11 Եկամուտ չհետապնդող Ջրամատակարարում և վարձավճարների հավաքագրում

Վարկառուն պարտավոր է ապահովել, որ Շահագործողը առավելագույնը 70% (յոթանասուն) տոկոսով նվազեցնի ջրամատակարարման չափը 2015 թվականից սկսած, որը որևէ եկամուտ չի առաջացնում, («NRW», ինչպես սահմանված է IWA կողմից):

Ավելին, Վարկառուն, Պայմանագրի ուժի մեջ մտնելուն պես, պետք է երաշխավորի այն փաստը, որ Շահագործողը պահպանում է հավաքման դրույքը՝ 90%-ից բարձր որևէ տվյալ տարվա կտրվածքով (դա համարվում է վարձավճարների ընդհանուր գումարը, որը վճարվում է Շահագործողին իր հաճախորդների կողմից՝ բաժանված գումարի չափով՝ որպես հաշիվ ներկայացված է հաճախորդներին Շահագործող կողմից՝ որոշակի օրացուցային տարվա կտրվածքով կամ դրանից հետո հավելույթը:

6.12 Ֆինանսական միջոցների օգտագործման սահմանափակում

Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի, Շահագործողը չօգտագործի կամ չի պարտավորեցնում օգտագործել սույն Պայմանագրով ստացված ցանկացած ֆինանսական միջոցներ ֆինանսավորելու համար ծրագրեր կամ սխեմաներ, որոնք պահանջում են.

(i) Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում («ՇՄԱԳ»), կամ

(ii) կենսաբազմազանության գնահատում

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, նախքան իրավասու մարմիններից համաձայնություն ստանալը և ՇՄԱԳ-երի ոչ տեխնիկական ամփոփագրերի հրապարակումը և Բանկի կողմից ստացումը:

6.13 Տեղեկատվություն և քննարկումներ ջրային ոլորտի վերաբերյալ

Վարկառուն պարտավոր է տեղեկացնել Բանկին և հրավիրել վերջինիս մասնակցել՝ (i) ցանկացած առարկայական քննարկման շուրջ Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտում ապագա փոփոխությունների վերաբերյալ և (ii) կառավարման ցանկացած նոր մոդելների մշակման ժամանակ, ինչպիսին է Շահագործողի համար հանրային - մասնավոր գործընկերությունը՝ սկսած 2014 թ.-ից:

6.14 Համապատասխանություն օրենսդրությանը

Վարկառուն պետք է համապատասխանի և պետք է ապահովի Շահագործողի համապատասխանությունը բոլոր օրենքներին և կանոններին բոլոր առումներով, որոնք կիրառելի են Վարկառուի, Առաջադրողի կամ Ծրագիր նկատմամբ:

6.15 Գործունեության փոփոխություն

Վարկառուն պետք է ապահովի, որ սույն Պայմանագրի ստորագրման պահից ի վեր որևէ ոչ մի էական փոփոխություն չկատարվի Շահագործողի ընդհանուր գործունեության մեջ:

6.16 Մատյաններ և գրանցումներ

Վարկառուն պարտավոր է ապահովել Առաջադրողի կողմից հաշվի համար համապատասխան մատյանների և գրանցումների վարումն ու պահպանումը, որոնց մեջ լրիվ և ճշգրիտ գրանցումներ են կատարվում Շահագործողի բոլոր ֆինանսական գործարքների և ակտիվների և գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ ծրագրի հետ կապված ծախսերը, համաձայն GAAP, որն ուժի մեջ է ժամանակ առ ժամանակ:

6.17 Ակտիվների օտարում

(ա) Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Շահագործողը, առանց Բանկի գրավոր համաձայնության մեկ կամ մի շարք գործարքների միջոցով չօտարի իր բիզնեսի, ձեռնարկության կամ ակտիվների մի մասը կամ ամբողջը՝ անկախ դրանից դա կատարվում է կամովի թե բռնի կերպով:

(բ) Վերոնշյալ պարագրաֆ (ա)-ն Ծրագրի մաս կազմող ակտիվներից և դուստր ձեռնարկությունների բաժնետոմսերում ներառված ակտիվներից բացի այլ ակտիվներ չի օտարում՝ արդար շուկայական արժեքի համաձայն:

Համաձայն սույն Հոդվածի՝ «ցանկացած տեսակի օտարում» ներառում է որևէ գործողություն, որն ազդում է առևտրի, փոխանցումների, լիզինգի և այլ օտարումների վրա:

6.18 Ընդհանուր պարտավորություններ և երաշխիքներ

Վարկառուն հայտարարում և երաշխավորում է Բանկին, որ

(ա) Շահագործողը պատշաճ կերպով և օրինական գործում է որպես փակ բաժնետիրական ընկերություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և ի զորու է շարունակել իր գործունեությունը, ինչպես այն այժմ իրականացվում է, և տնօրինել իր գույքը և այլ ակտիվները,

(բ) այն իրավազոր է իրականացնել, տրամադրել և կատարել իր պարտավորությունները սույն Պայմանագրի ներքո, և, որ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարվել են վերոնշյալ գործառույթները լիազորելու նպատակով,

(գ) սույն Պայմանագիրը կազմված է իրավաբանորեն վավեր, պարտադիր ուժ ունեցող և ուժի մեջ գտնվող պարտավորություններից,

(դ) համաձայն սույն Պայմանագրի դրույթների իր պարտավորությունների կատարումը, իրականացումը և տրամադրումը չի կարող՝

(i) խախտել կամ հակասել որևէ կիրառվող օրենքի, օրենսդրական ակտի, կանոնի, կարգավորման կամ որևէ դատավճռի, որոշման կամ թույլտվության հետ,

(ii) խախտել կամ հակասել որևէ համաձայնագրի դրույթները կամ դրա հետ կապ ունեցող այլ ֆինանսական գործիք, որը կարող է էական անբարենպաստ ազդեցություն ունենալ Պայմանագրի ներքո նրա պարտավորությունների կատարման վրա,

(ե) Շահագործողի հաշիվների վերջին համախմբված աուդիտի հաշվետվությունները պատրաստվել են նախորդ տարիների փորձի հիման վրա և հաստատվել իր իսկ աուդիտորների կողմից, որով ներկայացվում է տվյալ տարվա համար գործողությունների արդյունքների իրական պատկերը, ինչպես նաև ճշգրտորեն բացահայտվել կամ վերապահումով են մոտեցել Շահագործողի բոլոր պարտավորություններին (իրական կամ չնախատեսված)

(զ) սույն պայմանագրի կնքման պահից սկսած չկան էական անբարենպաստ փոփոխություններ,

(է) չի կատարվել որևէ պարտազանցման դեպք՝ համաձայն Հոդված 10.01-ի, որը շարունակվում է մնալ չշտկված կամ մերժված.

(ը) ոչ մի դատավարություն, միջնորդ վարչական վարույթ կամ հետաքննություն առկա չէ կամ ըստ իր իմացության չի սպառնում ընթացքի մեջ լինել որևէ դատարանում, միջնորդ մարմիններում կամ գործակալությունում, որը կարող է հանգեցնել էական անբարենպաստ փոփոխությունների կամ չբավարարված դատավճիռների՝ ուղղված իր կամ իրեն պատկանող պատկանող դուստր ձեռնարկություններին:

(թ) այն տրամադրել է սույն Պայմանագրի առնչությամբ պետական կամ հասարակական մարմինների կամ իշխանությունների բոլոր անհրաժեշտ համաձայնությունները և լիազորագրերը, թույլատրագրերը կամ հաստատումներ և բոլոր այդպիսի համաձայնությունները, լիազորագրերը, թույլատրագրերը կամ հաստատումները ամբողջությամբ ուժի մեջ են և վավեր, և ակնհայտորեն ընդունելի,

(ժ) Շահագործողը կառավարական կամ պետական մարմինների կամ իշխանությունների կողմից ձեռք է բերել բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, լիազորությունները, արտոնագրերը կամ հաստատումները սույն Պայմանագրի և Ծրագրի, Ծրագրային Համաձայնագրի առնչությամբ և որպեսզի օրինական ճանապարհով կատարել Պայմանագրով սահմանված իր պարտականությունները, և բոլոր այդպիսի համաձայնությունները, լիազորագրերը, թույլատրագրերը կամ հաստատումները ամբողջությամբ ուժի մեջ են և վավեր, և ակնհայտորեն ընդունելի,

(ի) սույն Համաձայնագրի շրջանակներում իր վճարման պարտավորությունները դասակարգվեն բոլոր ներկա և ապագա չերաշխավորված այլ պարտավորությունների վճարման իրավունքին համարժեք՝ իր ցանկացած պարտքային գործիքի ներքո:

(յ) այն համապատասխանում է հոդված [6.05 (ե)]-ին, և համաձայն դրա՝ համապատասխան հարցումներ իրականացնելու ընթացքում որոշակի է դարձել, որ ոչ մի տեսակ Բանապահպանական դատավարություն չի սկսվել և չի սպառնում, որ կսկսվի դրա նկատմամբ

(խ) այն համապատասխանում է Հոդված 6-ով սահմանված իր պարտավորություններին;
Վերոնշյալ փաստերն ու երաշխիքները պետք է ուժի մեջ մնան մինչև սույն Պայմանագրի ավարտը և կրկնվեն յուրաքանչյուր Սահմանված Հատկացման ամսաթվին և յուրաքանչյուր Վճարման ամսաթվին:

Հոդված 7

Անվտանգություն

Հոդված 7-ի պարտավորությունները ուժի մեջ կլինեն սույն Պայմանագրի կնքման ամսաթվից սկսած կամ Վարկի ուժի մեջ մտնելուց հետո այնքան ժամանակ, քանի դեռ որևէ գումար մնում է չվճարված Պայմանագրի ներքո:

7.01 Համարժեք դասակարգում/տեղակարգում

Վարկառուն պետք է ապահովի, որ իր վճարման պարտավորությունները սույն Պայմանագրի շրջանակներում դասակարգվեն բոլոր ներկա և ապագա չերաշխավորված այլ պարտավորությունների վճարման իրավունքին համարժեք՝ իր ցանկացած պարտքային գործիքի ներքո: Մասնավորապես, եթե Բանկը պահանջ ներկայացնի՝ համաձայն Հոդված 10.01-ի կամ Վարկառուի, իր որևէ գործակալության կամ աջակցման մարմնի չերաշխավորված կամ չստորակարգված պարտքային գործիքի ներքո որևէ պարտազանցման դեպքում Վարկառուն չի կատարի (լիազորված չէ) վճարումներ՝ կապված որևէ այլ պարտքային գործիքի հետ՝ առանց միաժամանակ վճարելու կամ հետաձգելու սահմանված հաշիվը հաջորդ վճարման ամսաթվին, այնքանով որքանով սույն պայմանագրի ներքո մնում է չվճարված կամ պարտքային գործիքի ներքո առկա ընդհանուր պարտքի գումարի չափով: Հետևաբար պարտքային գործիքի ցանկացած վճարում, որը կատարվում է այլ գործիքի հաշվին և որի անոչությամբ միևնույն անձինք պահանջ են ներկայացրել՝ կանտեսվեն:

7.02 Լրացուցիչ Երաշխիք

Եթե Վարկառուն որևէ երրորդ կողմի տրամադրի ցանկացած երաշխիք պարտքային գործիքի կատարողականի վերաբերյալ կամ տրամադրի որևէ նախապատվություն, ապա Վարկառուն Բանկի պահանջի համաձայն, ըստ սույն Պայմանագրի կտրամադրի ինչպես համարժեք երաշխիքներ իր պարտավորությունների կատարողականի, այնպես էլ նախապատվության վերաբերյալ:

7.03 Ներառման կարգով հոդվածներ

Եթե Վարկառուն ցանկացած այլ Վարկառուի հետ կնքի միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման համաձայնագիր, որում կնկատվեն վարկանիշի կամ համաձայնության կորուստ կամ պարտավորությունների խաչաձև չկատարման դրույթներ, որոնք կհամարվեն ավելի լուրջ խախտումներ քան սույն Պայմանագրի համարժեք դրույթները, Վարկառուն, Բանկի պահանջի համաձայն, Բանկին կտեղեկացնի սույն Պայմանագրի դրույթները վերջինիս շահերին համապատասխան փոփոխման վերաբերյալ:

Հոդված 8

Տեղեկատվություն և այցեր

8.01 Ծրագրին վերաբերող տեղեկություն

Վարկառուն պարտավորում է ապահովել, որ Շահագործողը

(ա) Բանկին տրամադրի:

(i) տեղեկատվություն ժամանակացույց A.2-ում նշված բովանդակությամբ, ձևով և ժամանակին, կամ սույն Պայմանագրի կողմերի միջև ժամանակ առ ժամանակ ձեռք բերված համաձայնեցված կարգով, և

(ii) Ծրագրի ֆինանսավորման, ձեռքբերման, իրականացման, կյանքի կոչման և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կամ հետազայում փաստաթուղթ, որը Բանկը կարող է հիմնավոր կերպով պահանջել համապատասխան ժամանակահատվածում՝

այն դեպքում, եթե նման տեղեկատվությունը կամ փաստաթուղթը Բանկին չի տրամադրվում ժամանակին, և Վարկառուն չի շտկում բացթողումը Բանկի կողմից գրավոր կերպով սահմանված ժամանակահատվածում, Բանկը հնարավորության սահմաններում կարող է լրացնել բացը՝ նշանակելով իր անձնակազմին կամ խորհրդատուի կամ որևէ երրորդ կողմի Վարկառուի հաշվին, և Վարկառուն տվյալ անձանց պետք է ցուցաբերի անհրաժեշտ աջակցություն:

(բ) Ծրագրի ցանկացած փոփոխություն անհապաղ ներկայացնել Բանկին հաստատելու համար, ինչպես նաև հաշվի առնելով Ծրագրի բացահայտումները, որոնք հայտնաբերվել են սույն Պայմանագիրը ստորագրվելուց առաջ, այդ թվում Ծրագրի գնի, դիզայնի, պլանների, ժամանակացույցի կամ նախատեսված ծախսերի կամ ֆինանսական ծրագրի հետ կապված;

(գ) անհապաղ տեղեկացնել Բանկին:

(i) որևէ երրորդ կողմի նախաձեռնած ցանկացած գործողության, բողոքի կամ առարկությունների, ինչպես նաև Վարկառուի և Շահագործողի կողմից ստացված որևէ իրական դժգոհության կամ Բնապահպանությանն առնչվող Պահանջի սպառնացող կամ արդեն իսկ ընթացքի մեջ կամ առկա լինելով գտնվող էական դատական գործընթացի մասին՝ Ծրագրի վրա ազդեցություն ունեցող շրջակա միջավայրի կամ այլ հարցերի առնչությամբ:

(ii) Վարկառուին հայտնի ցանկացած փաստի կամ դեպքի մասին, որոնք էապես վնասեն Ծրագրի գործունեությանն ու իրականացմանը;

(iii) Բնապահպանության օրենքին ցանկացած անհամապատասխանության մասին; և

(iv) Բնապահպանական հաստատման ցանկացած, դադարեցման կամ չեղյալ հայտարարելու մասին, և ձեռնամուխ լինել այս հարցերի լուծման միջոցները;

(դ) Բանկին տրամադրի վերջինիս բավարարող ձևով և բովանդակությամբ

(i) Ծրագրի իրականացման ընթացքում պարտաստված կիսամյակային առաջընթացի զեկույցներ՝ սկսած [2013թ. մարտի 31-ից], որոնք պետք է ներկայացվեն յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո 30 (երեսուն) օրից ոչ ուշ, և

(ii) Ծրագրի ավարտի վերաբերյալ հաշվետվություն, ինչպես ներկայացված է Ժամանակացույց A.2-ում, և

(ե) պահանջի դեպքում Բանկին տրամադրի.

(i) ապահովագրական ընկերության կողմից հավաստագիր, որը ցույց կտա Հոդված [6.05(c)]-ում նշված պահանջների իրագործումը,

(ii) տարեկան կտրվածքով գործող քաղաքականությունների ցանկ, որը կծածկի Ծրագրի մաս կազմող ապահովագրված սեփականության ծախսերը՝ առկա հավելավճարների հետ միասին:

8.02 Տեղեկություն Վարկառուի վերաբերյալ

Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ Շահագործողը

(ա) տրամադրի Բանկին.

(i) աուդիտի ամփոփած ֆինանսական տարեկան հաշվետվությունները, որոնք պատրաստված են Շահագործողի կողմից համաձայն Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (IFRS) կամ պաշտոնական ընդհանուր հաշվապահական հաշվառման ստանդարտների, որոնք օգտագործվում և հետևողականորեն կիրառվում են Հայաստանի Հանրապետությունում՝ միջազգայնորեն ընդունված սկզբունքների և չափանիշների համաձայն անկախ Աուդիտորի կողմից համաձայնեցված Բանկի հետ կատարված հաշվետուգման արդյունքում; և

(ii) Բանկը ողջամտորեն կարող է պահանջել ժամանակ առ ժամանակ, լրացուցիչ տեղեկություններ իր կամ Շահագործողի ընդհանուր ֆինանսական վիճակի մասին, ինչպես նաև համապատասխան լինելու մասին վկայականները իրեն կամ Շահագործողի վերաբերվող՝ համաձայն Հոդվածի 6-ի և Ծրագրային Համաձայնագրի;

(բ) ապահովի, որպեսզի Շահագործողի հաշվապահական հաշվետվությունները ամբողջովին արտացոլեն Ծրագրի իրականացման հետ կապված ֆինանսական գործընթացները, և

(գ) Բանկին անհապաղ տեղեկացնի.

(i) սույն Պայմանագրի կնքման օրվանից հետո Շահագործողի [օրենդարական ակտերի, փոխըմբռնման հուշագրերի և ասոցիացիայի հոդվածների] կամ բաժնետիրական կառուցվածքի որևէ էական փոփոխության մասին,

(ii) որևէ փաստի մասին, որը Վարկառուին կամ Շահագործողին պարտավորեցնում է վճարել որևէ ֆինանսական պարտավորություն կամ ԵՄ ֆինանսավորում,

(iii) որևէ դեպքի կամ որոշման մասին, որը հանդիսանում է կամ կարող է հանգեցնել Հոդված 4.03A(2)-ում բնութագրված դեպքերի,

(iv) Շահագործողի որևէ մտադրության մասին իր որևէ ակտիվի նկատմամբ անվտանգություն սահմանելու համար երրորդ կողմի շահերից բխելով,

(v) Շահագործողի որևէ մտադրության մասին Ծրագրի որևէ էական բաղադրիչի սեփականությունից հրաժարվելու առնչությամբ,

(vi) որևէ փաստի կամ իրադարձության մասին, որը հիմնավոր կերպով կարող է կանխել Վարկառուի որևէ պարտավորության կատարմանը սույն Պայմանագրի ներքո,

(vii) Հոդված 10.01-ում թվարկված որևէ դեպքի մասին, որը առկա է սպառնալիքի տակ է, կամ կանխատեսվում է, կամ

(viii) որևէ դատական գործընթացի, միջնորդ դատարանի, վարչական գործընթացի կամ հետաքննության վերաբերյալ, որոնք սպառնում կամ արդեն իսկ ընթացքի մեջ են և կարող են հանգեցնել էական Անբարենպաստ Փոփոխության:

8.03 Բանկի կողմից այցելություններ

Վարկառուն պետք է թույլ տա և պետք է ապահովի, որ Բանկի կողմից նշանակված և Առաջադրողի թուվտվությամբ անձինք, ինչպես նաև ԵՄ այլ հաստատությունների կամ մարմինների կողմից նշանակված անձինք, երբ դա պահանջվում է համապատասխան ԵՄ օրենսդրության դրույթներով, այցելել Ծրագրի վայրերը, տեղադրումները և աշխատանքները և անցկացնել ստուգումներ իրենց ցանկությամբ, և տրամադրել իրենց կամ ապահովել բոլոր անհրաժեշտ աջակցությունը սույն նպատակի համար:

Համաձայն նախորդ նախադասության՝ Բանկի կողմից նշանակված համապատասխան անձանց կարող են ուղեկցել Աուդիտորների Եվրոպական դատարանի, Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպական Խարդախության դեմ պայքարի Եվրոպական Գրասենյակի (OLAF) կամ ցանկացած այլ ԵՄ կազմակերպության կամ մարմնի ներկայացուցիչները, ինչպես նաև Եվրոպական համայնքի այլ հաստատությունների կողմից:

Վարկառուն գիտակցում է, որ Բանկը կարող է ստիպված լինել հաղորդելու Վարկառուի և Ծրագրի հետ կապված նման տեղեկությունը ցանկացած Եվրոպական համայնքային հաստատության կամ մարմնի՝ համաձայն Եվրոպական միության օրենքի համապատասխան մանդատային դրույթների:

Հոդված 9

Վճարներ և ծախսեր

9.01 Հարկեր, տուրքեր և վճարներ

Վարկառուն պետք է վճարի բոլոր հարկերը, տուրքերը, վճարները և այլ ցանկացած բնույթի պարտադիր վճարներ՝ ներառյալ դրոշմանիշի տուրքը և գրանցման վճարումը, որոնք կծագեն սույն Պայմանագրի իրականացումից կամ այլ համապատասխան փաստաթղթից՝ կիրառելի սահմաններում Վարկի որևէ երաշխիքի ստեղծման, կատարելագործման, գրանցման կամ կիրարկման համար:

Սույն Պայմանագրի համաձայն՝ Վարկառուն պետք է վճարի ողջ հիմնագումարը, տոկոսադրույքը, փոխհատուցման գումարը և այլ վճարման ենթակա գումարները առանց որևէ ազգային կամ տեղական հարկադրման իջեցման, այն դեպքում, եթե Վարկառուն պարտավոր է կատարել նման գնային իջեցում, այն կավելանա Բանկի գումարին, որպեսզի իջեցումից հետո Բանկի կողմից ստացվող մաքուր գումարը համարժեք լինի վճարման ենթակա գումարին:

9.02 Այլ վճարներ

Վարկառուն պետք է ստանձնի բոլոր հարկերի և այլ ծախսերի վճարումը՝ այդ թվում մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման հարկերը, որոնք առաջացել են սույն Պայմանագրի պատրաստման, կատարման, իրականացման և ավարտման առնչությամբ, ինչպես նաև վերոնշյալ ծախսերը առաջացել են սույն Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի փոփոխման, հավելման կամ հրաժարման կապակցությամբ, ինչպես նաև այլ գանձումներ՝ կապված վարկի երաշխիքի փոփոխման ստեղծման, կառավարման և իրականացման հետ:

9.03 Ավելացած ծախսեր, փոխհատուցում և հաշվանցում

ա. Վարկառուն պարտավոր է Բանկին վճարել ցանկացած գումար կամ ծախսեր, որոնք առաջացել են ցանկացած օրենքի կամ կանոնակարգի ներդրման կամ փոփոխության արդյունքում /կամ մեկնաբանության, կիրառման կամ կառավարման/ կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի համապատասխանելիության արդյունքում սույն Պայմանագրի ստորագրման օրվանից, և որոնց համաձայն (i) Բանկը պարտավոր է կրել լրացուցիչ ծախսեր ֆինանսավորելու կամ սույն Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները կատարելու նպատակով, կամ (ii) սույն Պայմանագրի համաձայն ցանկացած գումար, որը Բանկին պարտք է համարվում կամ ֆինանսական եկամուտ է առաջացած վարկ տրամադրելու հետևանքով կամ Բանկի կողմից Վարկառուին տրամադրված Վարկի նվազեցման կամ վերացման հետևանքով:

բ. Սույն Պայմանագրի կամ որևէ այլ կիրառելի օրենքով նախատեսված առանց Բանկի որևէ իրավունքները խախտելու Վարկառուն պարտավոր է հատուցել և պահպանել Բանկի անվտանգությունը ցանկացած առաջացած կորուստից ցանկացած վճարման կամ պարտքի ազատման հետևանքով, որոնք կատարվել են սույն Պայմանագրի սահմանված գործընթացներից դուրս:

գ. Սույն Պայմանագրի համաձայն՝ Բանկը կարող է պահանջել Վարկառուից, ցանկացած պարտավորություն (Բանկին պատկանող չափով), ցանկացած պարտավորության դիմաց (անկախ հանգամայից լինելուց) Բանկի կողմից Վարկառուին տրված պարտքի դիմած անկախ իր վճարման վայրից, ամրագրված մասնաճյուղի կամ այլ պարտավորության տարադրամի: Եթե պարտատոմսն այլ արժույթով է, ապա Բանկը կարող է փոխանակել ցանկացած պարտատոմս շուկայական փոխարժեքով իր սովորական գործունեության ընթացքում: Եթե որևէ պարտատոմսը լուծարված կամ հստակ չէ, ապա Բանկը կարող է արձակել դա այն գումարով, որը համապատասխանում է պարտատոմսի արժեքին

Հոդված 10

Պարտավորություններ չկատարելու / դեֆոլտի/ դեպքեր

10.01 Ետվճարման պահանջի իրավունք

Բանկի կողմից գրավոր պահանջարկ ներկայացնելու դեպքում Վարկառուն պետք է անմիջապես վճարի վարկը ամբողջությամբ կամ մասամբ սույն Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների և այլ հաշվարկված գումարների հետ միասին՝ համաձայն հետևյալ դրույթների.

10.01A Անհապաղ պահանջ

Բանկը կարող է անմիջապես նման պահանջ ներկայացնել.

ա. Եթե վարկառուն չի վճարում սույն պայմանագրով հաստատված գումարը նշված վայրում և նշված արժույթով պատշաճ ժամկետում եթե, (i) չվճարելու պատճառը պայմանավորված է վարչական կամ տեխնիկական սխալով կամ կազմալուծման իրադարձություն,ով և (ii) վճարումը կատարված է նշված վճարման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

բ. եթե Վարկառուի, Շահագործողի կամ սույն Պայմանագրում նշված Վարկառուի կամ Ծրագրի համաձայնագրում նշված Շահագործողի կողմից Բանկին տրված որևէ տեղեկատվություն, փաստաթուղթ, ցանկացած, ինչպես նաև հաշվետվություն, որը պետք է ներկայացվի կամ ներկայացվել է կամ կապված սույն Պայմանագրի կամ Ծրագրային Համաձայնագրի իրականացման բանակացությունների հետ ստույգ չեն կամ էականորեն թյուրլըմբռնելի:

գ. եթե կապված որևէ պարտավորության չկատարման հետ պայմանագրային արտոնյալ ժամկետի լրանալուց հետո Վարկառուից պահանջվի կամ հնարավոր է պահանջվի մարման ժամկետից առաջ նախապես վճարել, մարել կամ ավարտել որևէ ֆինանսական գործարքից առաջացած ցանկացած վարկ կամ պարտավորություն, նրա կողմից ընդհատվում կամ չեղյալ է համարվում,

(դ) եթե Վարկառուն ի վիճակի չէ կամ ժամանակավորապես ընդհատում է վճարել իր պարտքերը կամ Բանկին առանց նախապես գրավոր ծանուցում ներկայացնելու փորձում է փոխզիջման գալ կամ համաձայնության է գալիս իր Վարկատուների հետ,

(ե) եթե Շահագործողի լուծարման հետ կապված որևէ կորպորատիվ գործողություն, դատական գործընթաց, ընթացակարգ կամ այլ քայլեր է ձեռնարկվում, ինչպես նաև հրաման կամ որոշում է արձակվում, կամ եթե Շահագործողը քայլեր է ձեռնարկում իր կապիտալի շոշափելի նվազեցման ուղղությամբ, հայտարարվում է սնանկ, դադարեցնում կամ որոշում է դադարեցնել բիզնեսը ամբողջությամբ կամ մասամբ,

(զ) եթե դատարանի իրավասության շրջանակներում կամ որևէ այլ իրավասու վարչարար պաշտոնյայի կամ անձի կողմից նշանակված գրավատերը, ընդունողը, լուծարիչ անձը, վարչարարը կամ վարչարար ընդունողը կամ այլ նմանատիպ պաշտոնյան ստանձնում է Շահագործողի ակտիվների կամ բիզնեսի, ինչպես նաև Ծրագրի մաս կազմող որևէ սեփականության շահագործումը,

(է) եթե որևէ գույքի կալանք, բռնագրավում կամ այլ գործընթացը գանձվում է կամ կիրառվում է Շահագործողի գույքի կամ Ծրագրի սեփականություն կազմող մասի առնչությամբ, և որը չեղյալ է հայտարարվում կամ ընդհատվում 14 (տասնչորս) օրվա ընթացքում.

(թ) եթե տեղի են ունեցել Վարկառուի կամ Շահագործողի պայմանների անբարենպաստ փոփոխություններ Պայմանագրի կնքումից հետո,

(ժ) եթե սույն Պայմանագրի կամ Ծրագրային Համաձայնագրի ներքո Վարկառուի, Շահագործողի համար պարտավորությունների կատարումը դառնում է անօրինական, կամ սույն Պայմանագիրը կամ Ծրագրային Համաձայնագիրը չեն իրականացվում համաձայն իր դրույթների, կամ Վարկառուն, Շահագործողը հաստատում են, որ դրանք չեն իրականացվում համաձայն իր պայմանների,

(ի) եթե Ծրագրային Համաձայնագիրը անվավեր է դառնում կամ կողմերից որևէ մեկը հրաժարվում է դրանից,

(յ) եթե Վարկառուի որևէ պարտավորություն, ինչպես նշված է Շրջանակային համաձայնագրում՝ կապված Բանկի կամ ԵՄ միջոցներից Վարկառուի տարածքում որևէ վարկառուի տրվող վարկի հետ դադարում է իրականացվել,

(խ) եթե Վարկառուն չի կատարում իր պարտավորությունները ՎՋԵԲ Վարկային փաստաթղթերի, ԵՄ Ֆինանսավորման Համաձայնագրի կամ ՀՆԾ փաստաթղթերի ներքո,

(ծ) եթե Վարկառուն չի կատարում իր պարտավորությունները կապված Բանկի կամ ԵՄ կողմից տրվող ցանկացած այլ վարկի կամ ֆինանսական գործիքի հետ, կամ որևէ այլ պարտավորություն՝ կապված ԵՄ կողմից Վարկառուին տրվող դրամական միջոցների ստացման հետ:

10.01B Պահանջ փոխհատուցման ծանուցումից հետո

Բանկը նաև կարող է նման պահանջ ներկայացնել.

(ա) եթե Վարկառուն կամ Շահագործողը չեն կատարում սույն Պայմանագրով կամ Ծրագրի Համաձայնագրով սահմանված ցանկացած պարտավորություն, և որը չի համարվում որպես Հոդված 10.01A-ում նշված պարտավորություն,

(բ) եթե Նկարագրում նշված ցանկացած հանգամանք էականորեն փոփոխվի և չվերականգնվի, և, եթե տվյալ փոփոխությունը վնաս հասցնի Բանկի շահերին կամ անբարենպաստ կերպով ազդի Ծրագրի իրականացման վրա կամ ցանկացած այլ պարտավորությանն, դադարում է լինել օրինական և պարտադիր,

Մինչև Բանկի կողմից ներկայացված ծանուցումով սահմանված ժամանակահատվածում Վարկառուի կամ Շահագործողի կողմից որևէ անհամապատասխանության շտկումը:

10.02 Օրենքով սահմանված այլ իրավունքներ

Հոդված 10.01-ը չպետք է սահմանափակի օրենքով սահմանված Բանկի ցանկացած այլ իրավունք Վարկի կանխավճարում պահանջելու համար:

10.03 Փոխհատուցում

10.03Ա Ֆիքսված տոկոսադրույքի տրանշեր

Համաձայն 10.01 Հոդվածի՝ ցանկացած ֆիքսված տոկոսադրույքի տրանշի առնչությամբ, Վարկառուն պետք է Բանկին վճարումներ կատարի Կանխավճարի Փոխհատուցման հետ մեկտեղ վարկի հիմնական գումարից, որը ենթակա է վճարման: Նման Կանխավճարի Փոխհատուցումը պետք է ավելանա Բանկի կողմից սահմանված վճարման ժամկետից և հաշվարկվի կանխավճարի կատարման օրվա հիման վրա:

10.03Բ Լողացող տոկոսադրույքի մասնաբաժինները

Համաձայն 10.01 Հոդվածի՝ կապված տրանշի լողացող դրույքաչափի հետ, Վարկառուն պետք է Բանկին վճարի պահանջվող գումարը ընթացիկ արժեքի 0.15%-ի հետ միասին՝ (տասնհինգ բազիսային կետ), որը տարեկան կտրվածքով հաշվարկվում և ավելանում է վճարման ենթակա գումարի վրա նույն կերպով, ինչ այն տոկոսադրույքը, որը համաձայն տրանշի մարման աղյուսակի կմնար չվճարված մինչև մարման ժամկետը.

Արժեքը կհաշվարկվի Վերաբաշխման դրույքաչափին հավասար զեղչված դրույքաչափով, որը կկիրառվի յուրաքանչյուր համապատասխան վճարման Ամսաթվին՝

10.03Գ Հիմնական դրույթներ

Հոդված 10.03-ի համաձայն՝ այն գումարները, որոնք ենթակա են վճարման պետք է կատարվեն Բանկի կողմից սահմանված կանխավճարի օրը:

10.04 Իրավունքից հրաժարման բացառում

Բանկի կողմից իր որևէ իրավունքի կամ միջոցի իրականացման ձախողումը, ձգձգումը կամ դրանց մասնակի կամ առանձին կատարումը՝ համաձայն սույն Պայմանագրի չի համարվի նման իրավունքներից կամ միջոցներից հրաժարում:

ՀՈԴՎԱԾ 11

Օրենք և Իրավասություն

11.01 Կարգավորող օրենք

Սույն պայմանագիրը և դրանից բխող կամ դրա հետ կապ չունեցող պայմանագրային պարտավորությունները պետք է կարգավորվեն Անգլիային և Ուելսի օրենքներով:

11.02 Իրավասություն

Սույն Պայմանագրի վերաբերյալ բոլոր վեճերը կներկայացվեն Եվրոպական համայնքների արդարադատության դատարանին (այսուհետ՝**Դատարան**) և կողմերը սույնով կենթարկվեն Դատարանի իրավասությանը:

Պայմանագրի կողմերը սույնով հրաժարվում են իրենց անձեռնմխելիությունից և իրավունքներից՝ առարկելու Դատարանի իրավասության նկատմամբ: Դատարանի որոշումը՝ համաձայն սույն Հոդվածի, պետք է լինի վերջնական և առանց սահմանափակումների ու վերապահումների պարտավորեցնի յուրաքանչյուր կողմին:

11.03 Ծառայությունների Գործակալ

Վարկառուն Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը սույնով նշանակում է որպես իր ծառայությունները մատուցող գործակալ՝ իր անունից կարգադրագրի, ծանուցման, հրամանի, դատավճռի կամ այլ իրավաբանական գործընթացների ծառայությունների ընդունման նպատակով:

11.04 Գործունեության Վայրը

Սույն Պայմանագրի համաձայն գործունեության վայրը լինելու է Բանկի նստավայրը, եթե չկա այլ գրավոր պայմանավորվածություն Բանկի հետ:

11.05 Տվյալներ վճարման ենթակա գումարների մասին

Սույն Պայմանագրից բխող ցանկացած իրավաբանական գործողության ժամանակ Բանկի սերտիֆիկատը՝ կապված սույն պայմանագրի ներքո Բանկին վճարման ենթակա որևէ գումարի կամ տոկոսադրույքի հետ, ակնհայտ սխալի բացակայության դեպքում անմիջապես կփաստի նման տոկոսադրույքի կամ գումարի մասին:

ՀՈԴՎԱԾ 12

Եզրափակիչ դրույթներ

12.01 Յուրաքանչյուր կողմին ներկայացվող ծանուցումներ

Սույն Պայմանագրի ներքո յուրաքանչյուր կողմին հասցեագրված ծանուցումներն ու այլ հաղորդագրություններ պետք է ուղարկվեն ներքոնշյալ հասցեով կամ ֆաքսի համարով, կամ կողմերի միմյանց ծանուցման դեպքում այլ հասցեով կամ ֆաքսով:

Բանկի կողմից	Ուղղված: Ops B 98-100 boulevard Konrad Adenauer L-2950 Luxembourg Ֆաքսի հմ.: [FAX NO.]
Վարկառուի կողմից	Ուղղված: Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն Մելիք Ադամյան փ. 1, Երևան 0010 Ֆաքսի հմ.: (+37410) 52 42 82
Պատճեններ	Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարության ջրային համակարգի պետական կոմիտե Վարդանանց փ. 13ա, Երևան 0010. Ֆաքսի հմ.: (+37410) 54 06 03

12.02 Ծանուցման ձևը

Սույն Պայմանագրի համաձայն ցանկացած ծանուցում կամ հաղորդություն պետք է լինի գրավոր ձևով: Ծանուցումներ և այլ հաղորդություններ, որոնց համար ժամկետները սահմանված են սույն Պայմանագրով կամ որոնց ամրագրված ժամկետները հաստատվել են կողմերի միջև, կարող են հանձնվել առձեռն, գրությամբ կամ ֆաքսով: Նման ծանուցումները և հաղորդագրությունները ենթադրվում են ընդունվել մյուս մասնակցի կողմից առաքման օրը առձեռն կամ պատվիրված նամակով հանձնելու դեպքում կամ փոխանցման ստացականով ֆաքսի դեպքում: Այլ ծանուցումներ կամ հաղորդություններ կարող են կատարվել առձեռն, պատվիրված նամակի կամ ֆաքսի ձևով կամ, կողմերի պայմանավորվածությամբ, էլեկտրոնային փոստի կամ այլ էլեկտրոնային կապի միջոցով:

Յուրաքանչյուր ծանուցումը ուղարկված ֆաքսով, որը չի ազդում ծանուցման գործողության ժամկետներին ըստ վերոնշյալ պարբերության, պետք է նաև ուղարկվի նամակի տեսքով ոչ ուշ, քան ֆաքսով ուղարկելու հաջորդ օրը:

Համաձայն սույն Պայմանագրի որևէ դրույթի և Բանկի պահանջի՝ Վարկառուի կողմից ներկայացված ծանուցումները պետք է տրամադրեն անձը կամ անձինք, ովքեր լիազորված են Վարկառուի անունից ստորագրելու ծանուցումը, ինչպես նաև տրամադրել այդ անձի կամ անձանց լիազորված ստորագրության նմուշը:

12.03 Պայմանագրեր (Երրորդ կողմերի Իրավունքները) Ակտ 1999

Անձը, որը չի հանդիսանում սույն Պայմանագրի կողմ, չի կարող կիրառել կամ օգտվել սույն Պայմանագրում նշված պայմաններից (Երրորդ կողմերի Իրավունքները) Ակտ 1999 և երրորդ կողմի համաձայնությունը չի պահանջվում որևէ փոփոխության դեպքում (ներառյալ ցանկացած թողարկում կամ ցանկացած պատասխանատվության փոխզիջում) կամ սույն Պայմանագրի դադարեցման վերաբերյալ:

12.04 Հրաժարում անձեռնմխելիությունից

Վարկառուն սույնով համաձայնվում է չհայցել և հրաժարվում է անձեռնմխելիությունից, որը թուլատրելի է օրենքով, այն չափով, որքանով Վարկառուն կարող է հայցել ինքնին նրա ակտիվների կամ կիրարկման պատկանելիքներն կամ այլ իրավական գործընթացի վերաբերյալ անձեռնմխելիության պահանջը ցանկացած իրավասության մեջ:

12.05 Դեկլարատիվ դրույթներ և հավելվածներ

Սույն Պայմանագրի մաս կազմող Նկարագրերը և դրանց վերաբերյալ ժամանակացույցերը՝

- ԺամանակացույցA Տեխնիկական նկարագիրը և հաշվետվություն
- ԺամանակացույցB EURIBOR-ի սահմանումը
- ԺամանակացույցC Վարկառուի կողմից ներկայացվող փաստաթղթերը
- ԺամանակացույցD Վարկառուի կողմից ներկայացվող հավաստագիրը

Հետևյալ Հավելվածը կցված է սույնում՝

Հավելված I Ստորագրող կողմի լիազորություն

ՈՐՊԵՍ ՀԱՍՏԱՏՈՒՄ՝ կողմերը կազմել են սույն Պայմանագիրը անգլերենբնօրինակներով, ինչպես նաև համապատասխանաբար ու պարտավորվել են ստորագրել սույն Պայմանագրի յուրաքանչյուր էջը:

Կատարվեց 2012թ.-ին

Հայաստանի Հանրապետության
անունից

Եվրոպական ներդրումային բանկի
անունից



•

•

•

Ա.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նպատակ, վայր

Ծրագրի նպատակն է ՀՀ 7 մարզերում 17 բնակավայր սպասարկող՝ “Հայաստանի ջրմուղ-կոյուղի” ընկերության (“ՀՋԿ”) կողմից շահագործվող ջրամատակարարման, ջրահեռացման (կոյուղու) և ջրի մաքրման օբյեկտների վերակառուցումն ու արդիականացումը: Ծրագրի հիմնական նպատակն է մոտ 300.000 բնակիչներին (“ՀՋԿ” բաժանորդների մոտ կեսը) մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը՝ խմելու ջրի մատակարարման տևողությունը զգալիորեն երկարացնելու միջոցով, որը ներկայում կազմում է միջինում ավելի քիչ, քան 14 ժամ, ինչպես նաև ապահովել ջրի որակի լիարժեք համապատասխանությունը միջազգային ստանդարտներին: Ջրի մաքրման նոր կայանների տեղադրման նպատակով կատարվելիք ներդրումը կհանդիսանա առաջին քայլը բնակավայրերի մեծ մասում համապատասխան որակի մաքրման բացակայության պատճառով ջրային պաշարների աղտոտվածության ներկա մակարդակը նվազեցնելու ուղղությամբ:

Նկարագիր

Ծրագրի շրջանակներում կվերականգնվեն Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 17 բնակավայրերի ջրամատակարարման, կոյուղու և ջրի մաքրման օբյեկտները՝ ներառյալ.

- ջրաբաշխման ցանցի վերականգնում, մասնավորապես՝ հին խողովակների փոխարինում, նոր պոմպակայանների և բաշխիչ խողովակների տեղադրում,
- աղբյուրների պահպանության ապահովում՝ սանիտարական գոտիների ստեղծման հետ միասին, հորատանցքերի վերականգնում և փորում, պոմպակայանների, ջրամբարների և քլորացման կայանների վերականգնում կամ ստեղծում,
- Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում ջրամաքրման նոր կայանների ստեղծում և գործող կայանների արդիականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների շրջանակները սահմանվել են ընդհանուր գծերով, քանի որ ներդրումային ծրագիրը և յուրաքանչյուր բնակավայրում իրականացվելիք աշխատանքների բնութագրերը մանրամասն կսահմանվեն նախագծման փուլում:

Ժամանակացույց

Ծրագիրն իրականացվելու է 2011-2014 թթ.ի ընթացքում:

Ա.2. Բանկին ներկայացվելիք՝ ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն և դրանց փոխանցման միջոցը

1. Տեղեկատվության փոխանցում: պատասխանատու անձի նշանակում

Ստորև նշված տեղեկատվությունը պետք է ուղարկվի Բանկին՝ հետևյալ անձի պատասխանատվության ներքո:

Կազմակերպություն	“Հայաստանի ջրմուղ-կոյուղի”
Կոնտակտային անձ	Նորիկ Գևորգյան
Պաշտոն	Ներդրումային ծրագրերի համակարգման գծով տնօրենի տեղակալ
Գործառույթ/Վարչություն	
Հասցե	00100, ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փ., փակ. Ցա
Հեռ./Ֆաքս	+ 37410 540101
Բջջ.	+ 37491 200031
Էլ.փոստ	ngevorgyan@armwater.am

Վերոնշյալ կոնտակտային անձը (անձինք) կհանդիսանա (ն) պատասխանատու կոնտակտային անձ:

Վարկառուն ԵՆԲ-ին անմիջապես կտեղեկացնի ցանկացած փոփոխության վերաբերյալ:

2. Հարուկ թեմաներին վերաբերող տեղեկություններ

Վարկառուն պետք է Բանկին տրամադրի հետևյալ տեղեկությունները ամենաուշը մինչև ստորև նշված ժամկետը:

Փաստաթուղթ/տեղեկատվություն	Ժամկետ
Բնապահպանական թույլտվություն կամ ՇՄԱԳ-ի տեխնիկական նկարագիր՝ ՇՄԱԳ պահանջող ցանկացած նախագծի համար	Մինչև ԵՆԲ միջոցների հատկացումը

3. Տեղեկատվություն ծրագրի իրականացման վերաբերյալ

Վարկառուն ստորև նշված ժամկետի սահմաններում Բանկին է տրամադրում ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

Փաստաթուղթ/տեղեկատվություն	Ժամկետ	Տեղեկացման պարբերականությունը

<p>Ծրագրի իրականացման վերաբերյալ գեկույցը.</p> <ul style="list-style-type: none"> - տեխնիկական նկարագրի համառոտ ներկայացում՝ նախնական նախագծից տեղի ունեցած շեղումների պատճառների բացատրությամբ; - ծրագրի հիմնական բաղադրիչների իրականացման նախատեսվող ավարտի ժամկետները՝ հնարավոր ուշացումների պատճառների բացատրությամբ; - ծրագրի արժեքը՝ նախնական բյուջեից տեղի ունեցած շեղումների բացատրությամբ; - շրջակա միջավայրի վրա ազդող հիմնական գործոնների նկարագրությունը; - գնումների գործընթացը; - հիմնական ցուցանիշները. բաշխված ջրի ընդհանուր ծավալը, վարձավճարների հավաքագրումը, ջրի կորուստների վերացում, ջրի մաքրման կայանների հզորությունը, ջրի սպառումը և այլն՝ ներառյալ նկատողությունները; - առաջացած բարդությունները և ռիսկերը, որոնք կարող են ազդել ծրագրի իրականացման ընթացքի վրա; - ծրագրի հետ կապված ցանկացած իրավական գործընթաց: 	<p>Հաշվետու ժամանակահատվածներին հաջորդող 60 օրվա ընթացքում (Ժամանակավորապես սահմանված են հունվար-հունիս և հուլիս-դեկտեմբեր)</p>	<p>Կիսամյակային կտրվածքով</p>
<p>...</p>		

4. Տեղեկատվություն աշխատանքների ավարտի և շահագործման առաջին տարվա վերաբերյալ

Վարկառուն ստորև նշված ժամկետի սահմաններում Բանկին է տրամադրում ծրագրի ավարտական փուլի և շահագործման սկզբնական փուլի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

Փաստաթուղթ/տեղեկատվություն	Բանկին տեղեկացնելու ժամկետը
<p>Ծրագրի ավարտի վերաբերյալ զեկույցը՝ ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> - ավարտված ծրագրի տեխնիկական բնութագրի համառոտ նկարագիրը՝ ցանկացած էական փոփոխությունների պատճառների բացատրությամբ; - ծրագրի բոլոր հիմնական բաղադրիչներն ավարտելու ամսաթվերը՝ առաջացած ուշացումների պատճառների բացատրությամբ; - ծրագրի վերջնական արժեքը՝ ծրագրավորված բյուջեի համեմատ ցանկացած գերազանցված ծախսերի պատճառների բացատրությամբ; - ծրագրի շնորհիվ ստեղծված նոր աշխատատեղերի քանակը՝ ծրագրի իրականացման ընթացքում և մշտական; - շրջակա միջավայրի վրա ազդող հիմնական գործոնների նկարագրությունը; - գնումների գործընթացի վերաբերյալ թարմացված տեղեկատվություն; - հիմնական ցուցանիշները. բաշխված ջրի ընդհանուր ծավալը, վարձավճարների հավաքագրումը, ջրի կորուստների վերացում, ջրի մաքրման կայանների հզորություն, ջրի սպառումը և այլն՝ ներառյալ նկատողությունները; - առաջացած բարդությունները և ռիսկերը, որոնք կարող են ազդել ծրագրի իրականացման ընթացքի վրա; - ծրագրի հետ կապված ցանկացած իրավական ընթացիկ գործընթաց: 	<p>Ծրագրի ավարտից հետո 15 ամիս (նախնական ժամկետ՝ 31 մարտի, 2015թ.)</p>
<p>Ձեկույցների լեզուն</p>	<p>Անգլերեն</p>

EURIBOR-ի սահմանումը

Ա. EURIBOR

“EURIBOR” նշանակում է

- (ա) մեկ ամսից քիչ համապատասխան ժամանակահատվածի համար Եվրոյով արտահայտված ավանդների տոկոսադրույք՝ մեկ ամսվա կտրվածքով.
- (բ) մեկ կամ ավելի ամբողջական ամիսների համապատասխան ժամանակահատվածի համար Եվրոյով արտահայտված ավանդների տոկոսադրույք՝ ամբողջ ամիսների քանակին համապատասխանող ժամանակահատվածի կտրվածքով, և
- (գ) մեկից ավելի ամիսների համար (սակայն ոչ ամբողջական ամիսներ) դրույքաչափ, որը ստացվել է Եվրոյով ավանդների երկու տոկոսադրույքների գծային միջարկման արդյունքում, որոնցից մեկը կիրառելի է ամբողջական ամիսների կտրվածքով, որին հաջորդում է կարճ ամիսը և մյուսը՝ ամբողջական ամիսների կտրվածքով հաջորդը ավելի երկար՝ քան համապատասխան ժամանակահատվածի տևողությունը.

(այն ժամանակահատվածը, որի ընթացքում վերցվել է տոկոսադրույքը կամ որից միջարկվել են տոկոսադրույքերը, կոչվում է «**Ներկայացման ժամանակահատված**» [Representative Period), ինչպես այն հրապարակվում է Բրյուսելի ժամանակով ժ. 11.00-ին կամ Բանկի համար ընդունելի՝ ավելի ուշ ժամին, համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվանը նախորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում, “Ռոյթերսի” “EURIBOR 01” կամ դրան հաջորդող էջում կամ, հակառակ դեպքում, Բանկի կողմից այդ նպատակով ընտրված ցանկացած այլ հրապարակման միջոցով:

Այդ տոկոսադրույքը չհրապարակելու դեպքում, Բանկն իր կողմից ընտրված՝ եվրո-գոտում գործող չորս խոշորագույն բանկերի եվրո-գոտում գործող գլխամասային գրասենյակներին կարող է խնդրել ներկայացնել իրենց հայտերն այն տոկոսադրույքի վերաբերյալ, որով դրանք առաջարկում են համեմատելի գումարի ավանդները Եվրոյով՝ Բրյուսելի ժամանակով ժ. 11.00-ի դրությամբ Վերսկսման ամսաթվին՝ եվրո-գոտու միջբանկային շուկայի առաջատար բանկերին ներկայացուցչական ժամանակահատվածին հավասար ժամկետով: Առնվազն երկու առաջարկի ներկայացման դեպքում տվյալ Վերսկսման ամսաթվին դրույքաչափը կհամարվի հայտերի միջին թվաբանականը:

Երկուսից պակաս հայտերի ներկայացման դեպքում, այդ Վերսկսման ամսաթվին դրույքաչափը կհամարվի Բանկի կողմից ընտրված՝ եվրո գոտու հիմնական բանկերի դրույքաչափերի միջին թվաբանականը՝ Բրյուսելի ժամանակով մոտ Ժ. 11.00-ի դրությամբ, Վերսկսման ամսաթվին հաջորդող երկու աշխատանքային օր անց, առաջատար եվրոպական բանկերին համեմատելի գումարով ներկայացուցչական ժամկետին հավասար ժամկետով տրամադրված եվրոյով վարկերի համար:

Եթե վերոնշյալ կարգով հաշվարկված դրույքաչափը զրոյից ցածր է, ապա EURIBOR-ը կհամարվի զրոյական:

Եթե վերոնշյալ կարգով դրույքաչափ չի հաշվարկվում, ապա EURIBOR կհամարվի Բանկի կողմից սահմանված այն դրույքաչափը (արտահայտված որպես տարեկան տոկոսադրույք), որը կհանդիսանա համապատասխան Տրանշի ֆինանսավորման ամբողջական ծախսը՝ հիմնվելով Բանկի կողմից ներքին կարգով գեներացված բազային դրույքաչափի կամ Բանկի կողմից որոշված մեթոդով հաշվարկված դրույքաչափի վրա:

- Բ. Ընդհանուր դրույթներ
Վերոշարադրյալ տեքստի իմաստով՝
- (ա) **“Լոնդոնի աշխատանքային օրը”** նշանակում է օր, երբ Լոնդոնում գտնվող բանկերը բաց են բնականոն գործունեության համար:
- (բ) Սույն Հավելվածում նշված հաշվարկների արդյունքում ստացված բոլոր տոկոսադրույքներն անհրաժեշտության դեպքում կկլորացվեն մինչև տոկոսադրույքի ամենամոտ մեկ հարյուրիազարականը՝ տասնորդականների կլորացմամբ:
- (գ) Բանկը Վարկառուին անհապաղ տեղեկացնում է իր կողմից ստացված արժեզների մասին:
- (դ) Եթե վերը նշված դրույթներից որևէ մեկը դադարի համապատասխանել EURIBOR FBE և EURIBOR ACI շրջանակներում ընդունված դրույթներին, Բանկը, այդ մասին ծանուցելով Վարկառուին, կարող է փոփոխություններ կատարել այդ դրույթներում՝ ապահովելով դրանց համապատասխանությունը նշված պահանջներին:

Վարկառուի փաստաթղթերը

Գ.1 Հատկացման առաջակի/ընդունման ծանուցման ձևաթուղթը (հոդվածներ 1.02Բ և 1.02Գ)

Ստացողը՝ Հայաստանի Հանրապետություն

Ուղարկողը՝ Եվրոպական ներդրումային բանկ

Ամսաթիվ՝

Թեմա՝ Եվրոպական ներդրումային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև-ին կնքված ֆինանսավորման համաձայնագրին կից հատկացման առաջարկը/ընդունման ծանուցումը.

FI համարը՝

Սերայիս համարը՝ 2009-0676

Հարգելի պարոնայք,

Սույն գրությամբ հղում է կատարվում Ֆինանսավորման Պայմանագրին: Ֆինանսավորման Պայմանագրով սահմանված տերմինները ունեն միևնույն նշանակությունը սույն նամակում կիրառվելիս:

Հետևելով Ձեր Վճարման Առաջարկի հարցմանը Բանկից, Ֆինանսավորման Պայմանագրի Հոդված 1.02B-ին համապատասխան, մենք սույնով առաջարկում ենք Ձեզ համար հասանելի դարձնել հետևյալ Տրանշը.

- (ա) Հատկացման ենթակա գումարը,
- (գ) Ժամանակացույցով սահմանված հատկացման ամսաթիվը,
- (դ) տոկոսադրույքի հաշվարկման հիմքը,
- (ե) տոկոսադրույքի վճարման հաճախականությունը,
- (զ) վճարման ժամկետները,
- (է) վարկի հիմնագումարի վճարման պայմանները,
- (ը) վարկի հիմնագումարի վճարման առաջին և վերջին օրերը,
- (թ) Մինչև Մարման Ամսաթիվը կիրառվող տարբերությունը/Spread

Տրանշը Ֆինանսավորման Պայմանագրի ժամկետներին և պայմաններին հասանելի առարկա դարձնելու համար, Բանկը պետք է ստանա Հատկացման Ընդունում Ձեր անունից պատշաճ կերպով ստորագրված սույն Հատկացման Առաջարկի օրինակի ձևով, հետևյալ ֆաքսով [___], ոչ ուշ քան Հատկացման Ընդունման Վերջնաժամկետը [ամսաթիվը], [ժամը] Լյուքսեմբուրգի ժամանակով:

Հատկացման Ընդունումը պետք է ուղեկցվի (եթե նախկինում չի տրամադրվել).

- (i) բանկի այն հաշվեհամարը (IBAN ծածկագրի հետ միասին), որին պետք է կատարվի Տրանշի հատկացումը, և

(ii) իշխանության կողմից լիազորված այն անձի կամ անձանց վկայությունը, որոնք Վարկառուի անունից լիազորված են ստորագրել այն և այդ անձի կամ անձանց ստորագրության նմուշները:

Եթե չի ընդունվում վերոնշյալ ժամանակը, ապա սույն փաստաթղթում պարունակվող առաջարկը ենթադրվում է մերժված և ինքնաբերաբար համարվում է ուժը կորցրած:

Եթե Դուք ընդունում եք Տրանշը, ինչպես նկարագրված է Հատկացման Առաջարկում, ապա Ֆինանսավորման Պայմանագրի բոլոր ժամկետներն ու պայմանները դառնում են կիրառելի:

Հարգանքով՝

Եվրոպական ներդրումային բանկ

Սույնով մենք ընդունում ենք վերոշարադրյալ Հատկացման առաջարկը:

Հայաստանի Հանրապետության անունից

Ամսաթիվ՝

Հավելված Դ

Վարկառուի կողմից տրամադրվող հավաստագրի ձևը (Հոդված 1.04Բ)

Ստացող. Եվրոպական Ներդրումային Բանկ

Ուղարկող. Հայաստանի Հանրապետություն

Ամսաթիվ՝

Թեմա. Եվրոպական ներդրումային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև-ին կնքված ֆինանսավորման Պայմանագիր (“**Ֆինանսավորման Պայմանագիր**”)

FI համարը

Սերայիս համարը 2009-0676

Հարգելի պարոնայք,

Ֆինանսավորման Պայմանագրով սահմանված տերմիններն ունեն սույն նամակում կիրառվող միևնույն նշանակությունը:

Ֆինանսավորման Պայմանագրի Հոդվածի 1.04 իրականացման նպատակով մենք սույնով վստահեցնում ենք Ձեզ հետևյալում՝

(ա) Հոդված 4.03Ա-ում սահմանված իրավիճակ չի արձանագրվել և ներկայում առկա չէ և չի շարունակում մնալ չշտկված,

(բ) Ծրագրի որևէ ասպեկտում չի կատարվել որևէ էական փոփոխություն, որի վերաբերյալ մենք պարտավորված ենք տեղեկացնել համաձայն Հոդված 8.01-ի, բացառությամբ մեզ նախապես հաղորդված դեպքերի,

(գ) մեր տրամադրության տակ առկա են բավականբազափ ֆինանսական միջոցներ՝ Հավելված Ա.1-ին համապատասխան սահմանված ժամկետներում Ծրագրի պատշաճ իրականացումն ու ավարտն ապահովելու համար,

(դ) սույն ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում չի կատարվել որևէ պարտազանցման/պարտավորությունների չկատարման դեպք՝ համաձայն Հոդված 10.01-ի, որը շարունակվում է մնալ չշտկված կամ մերժված,

(ե) Ոչ մի դատավարություն, միջնորդ վարչական վարույթ կամ հետաքննություն առկա չէ կամ ըստ մեր իմացության չի սպառնում ընթացքի մեջ լինել որևէ դատարանում, միջնորդ մարմիններում կամ գործակալությունում, որը կարող է հանգեցնել էական անբարենպաստ փոփոխությունների կամ չբավարարված դատավճիռների՝ ուղղված մեր կամ մեզ պատկանող դուստր ձեռնարկություններին,

(զ) ըստ Հոդված [6.18] մեր կողմից դիմումների և երաշխիքների պատրաստումը և կրկնօրինակումը, բոլոր դեպքերում օրինական են,

(է) թույլ Ֆինանսական պայմանագրի կնքման պահից սկսած չեն առաջացել էական անբարենպաստ փոփոխություններ՝ մեր պայմանների համեմատությամբ:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության անունից՝

Ամսաթիվ՝